



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Ամուսնամոռուծիւն Բ. Բ.
 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ. Օրագիր եւ լրագրութիւն..... ԻՐ. Ն. ՆՈՒԿԵՂՆ
 ՎԻՊԱԿԱՆ. Մատենի մեղքը — ԲՈՒ ԱԼԿԱՆ (Թարգմանութիւն)
 Պ. ՍԳՈՒՆԻ ԳՐԱՏՈՒՆԸ * * *
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին եւ Ազգային :
 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ. Հրդեհի դէմ միջոցներ (շարժ) :
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Երգ Սոխակի, (Բաղէշ) :

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈՒԽ եւ գաւառներու — տարեկան..... Կէս ոսկի Օսմ.
 » » վեցամսեայ..... Քառորդ ոսկի Օսմ.
 Մէկ թերթին գինն է..... 60 փարայ
 Ստար քաղաքաց Խամար տարեկան..... 12 ֆրանք
 » » » վեցամսեայ..... 6 »
 Թատարութեան ծախք — տարեկան..... Դան. արծ. 15
 Վեցամսայ..... » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
 Վալաթիա, Հորատունիեան Խան

Կ. ՊՈՒԽ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

**ՀԱՄԱՌՈՏ
ԸՆԴՀԱՆՈՒՐ Պ ՏՄՈՒԹԻՒՆ**

Դպրոցաց համար
Հին պատմութիւն Արևելեան ժողովրդոց
Հատոր Ա.
(Երկրորդ Տպագրութիւն)
Յօդինեց
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կեդրոնատեղին է Յ. Զէնճիրճեան
էֆէնտիի գրատունը ի Կ. Պօլիս Մահ-
մալա վաչա : Դին 6 զրուշ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԷՔԹՈՐ ՄԱՂՈՅ

ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

ՎէՊ ՍՐՏԱԳՐԱԿ ԵՒ ՀՐԱՀԱՆԳԻԶ
Պատկեալ ի ճեմարանէ Ծրանայի
Թարգմանութեան Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆԻ
ՀԱՏՈՐ Բ .

Կը գտնուի ամեն հայ գրավաճա-
ռաց քով , և Պահճէ գաբու ջրավաճառ
Պօղոս և Յակօբ աղաներուն խանութ-
ները . գին 7 1/2 զրուշ :

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ
Սկզբունք Բազմալեզու Տարգմանութեան 6 զշ .
Կարօր Խաչուրի երեսուն 2 Հտ . 12
Առաջնութեան Գրքերէն 6
Մարտիրոսի 7 1/2
Յերէիքի 7 1/2

ԿՈՒՆԵԹ-ԻԿԼ-ԼՈՒՂԱԹ

ԲԱՌԱՐԱՆ ՅՐԱՆՍԵՐԷՆԵ Ի ԹՈՒՐԻՔԵՐԷՆ

Աշխատասիրողը
Մէհմէտ Եփէն և Մէսայէ Աշէան
Պաշտօնեայք հասարակաց կրթութեան
Գրաքննութեան սենեկի
Հրատարակիչ
Դարեգին Պաշտարան

Հրատարակուեցաւ Բ . հատորին
15 քորդ տետրն ևս : Այս առթիւ կը
ծանուցուի թէ բաժանորդագրութիւնը
փակուած է :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ԴԵՂԱՐԱՆ

**Պ. ԵՒ Հ ՔԻԻԶԻԻԲԵԱՆ
ԵՂԲԱՐՑ**

Երկար ժամանակէ ի վեր՝ դեղավաճա-
ռութեան եւ դեղագործութեան զբաղելով՝
հասարակութիւնը դոհացնելու համար մեր
ձեռքէն եկած ջանքը խնայած չըլլալիս
յայտնի է մեր պատուարժան յաճախոր-
դաց և բոլոր հասարակութեան Այս ան-
գամ ալ , մեր յարգոյ յաճախորդաց դիւ-
րութիւն մ'ըլլալու համար , դեղարան մը
բանալ փափաքելով , չատ տարիներէ ի վեր
ամենուն ծանօթ Պօլսոյ Եֆէն-Ճամի փողո-
ցի 26 թիւ մթերանոցէն զատ՝ նոյնպէս Կ.
Պօլիս կամուրջին զիմացը 77 թիւ «Պ. եւ
Հ. Քիւչիւքեան եղբարք» անուամբ դեղա-
րան եւ մթերանոց (տէքօզիթօ) մ'ալ բացած
եմք , ուր Ծրանայի եւ Անդլոյ քիմիական
բաղադրութիւններն ու զանազան դեղե-
րը , մեծ խնամով շինուած , եւ ամենէն
ընտիր տեսակները կը գտնուին : Ասոնցմէ
զատ ամեն ատեն դործածուած զանազան
տեսակ գինի , ազնիւ ձկան իւղ , Նօրվէկի-
ոյ շօքօլա , քօնեաք եւ ուրիշ ըմպելիք միշտ
կը գտնուին : Եկած դեղագիրք խօլոյն
թարմ դեղերով , և մեծ խնամով կը պատ-
րաստուին : Ասոնցմէ զատ դեղարանին վեր-
նայարիւր բժշկաց համար յատուկ տեղ ու
բոլորած ըլլալով , հիւանդութեան մը համար
բժշիկ հետ խորհրդակցիլ ուզող անձինք ,
մեր դեղարանը գալով , ամեն կերպով օգուտ
կը տեսնեն :

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՔԻՄԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆ

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

33 ԴՆ ՏԱՐԻ

1884 ՕԳՈՍՏՈՍ 18

ԹԻԻ 3731

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՄՈՒՍԵԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Ամուսնական օրինաց ու բարուց մէջ յեղափոխութիւն մ'ըրաւ Ֆրանսա: Բարիկի Խորհրդարանին քուէարկած Ամուսնալուծութեան օրէնքը չնանհիր այն քաղաքական խնդիրներու որք օրական հետաքրքրութեան մը յադուրդ կուտան միայն: Այժմ քաղաքական կացութիւնը նոյն չեն ամենուրեք և չեն կրնար լինել, մարդկային բընութիւնը նոյն է Այն դեպի եզերաց որպէս Վոլֆորի ամանց վրայ, և պարզ հետաքրքրութենէ մը տարբեր կարեւորութիւն ունի մեզ համար օրէնք մը, որ կոչուած է դոհացում տալ մարդկային բնութեան ինչ ինչ պիտոյից, դարման տանելով օրինական և ընկերային կարգ մը զեղծումներու, որք մարդկային բնութեան թիւր հասկցողութեան հետեւանք են: Արեւելք արձանագրեց Ամուսնալուծութեան օրէնքին վիճաբանութիւններն, և բացատրեց թեր ու դէմ մէջ բերուած փաստերը: Ներկայ յոգուածին նպատակն է քննել ամուսնական նոր օրէնքին ընդհանուր ոգին և հետեւանքն, և տեսութիւն մ'ընել Հայոց մէջ ամուսնական օրէնադրութեան վիճակին վերայ: Այս վերջին խնդիր մեծ է և բեղուն: Մեք պիտի շատանանք միայն յուզելով զայդ խնդիր, — հանրային ու չարութիւն հրաւիրելով խնդրոյ մը վրայ, որ իւր կենսական կարեւորութեան հակառակ՝ յոյժ անտես եղած է մեր մէջ, ի մեծ վնաս ընտանեկան կենաց անդորրութեան ու բարեկարգութեան և հանրային բարուց աղնութեան:

Ա.

Պ. Նաքէի անդուլ ջանից պտուղն՝ Ամուսնալուծութեան նոր օրէնքը՝ գործադրուել սկսած է հաղիւ մէկ երկու շաբաթէ հետէ, և ահա միայն Բարիկի մէջ ամուսնալուծութեան քանի մը հազար խնդրագրեր մատուցուեցան դատական իշխանութեան: Ամուսնալուծութեան օրէնք մը բանաւորութիւնն ու պէտքն ընդունողները, Բարիկցի ամուսնոց՝ նոր միութեանց ի խնդիր՝ իրարմէ բաժնուելու այս աճադարանքը տեսնելով, ահաբեկելու տեղի չունին: Նոր օրէնքին համեմատ, այն ամուսինք որ երեք տարիէ հետէ բաժանեալ են դատական վճռով, կըրնան վերջնական դործել իրենց բաժանումն՝ ամուսնալուծութեան դիմելով: Վերջին 20 տարիներու մէջ ամուսնական բաժանմանց թիւը տարին 6,000է աւելի էր ի Ֆրանսա: Բնական է ուրեմն որ այսօր հազարաւոր ամուսինք դռնուին որք՝ առնըւալն երեք տարիէ հետէ բաժնուած՝ փափաքին ազատիլ իրարու նկատմամբ ամեն կապերէ, նոր ամուսնութիւն կնքել կարենալու համար: Դատարանք այսպէս ամուսնական հին դժտութեանց ահալիին դէպ մը կարգի պիտի դնեն՝ զբաղելէ առաջ այն նոր դատերով, զորս թելադրէ ամուսնալուծութեան օրէնքին հաստատումն:

Այս օրէնք, հակառակ ամեն սեղմումներու, զորս Մերակոյտի պահպանողական և չափաւոր անդամք յաջողեցան ներմուծել, բաւական ընդարձակ միջոցներ կ'ընձեռէ ամեն անոնց որք ամուսնական անտանելի դարձած լուծ մը թօթափել ուզեն: Այս տեսութեամբ ֆրանսական օրէնքն անդլիական օրէնքէն առաւել հեռի կ'երթայ: Ֆրանսացիք թէեւ Անգլիացոցմէ յետոյ կ'ընդունին ամուսնական օրինաց բարենորոգումը, բայց ինչպէս ուրիշ ամեն բարե-

նորոգմանց, նաեւ այս փոփոխութեան մէջ Անգլիացիներէն աւելի ծայրայեղ ուղղութեամբ մը կ'ընթանան, — բնաւորութեան խնդիր մը, պատմական իմաստաբարութեան քննութեան արժանի եղելութիւն մը:

Ամուսնական օրէնք ունեցող ամեն երկրի մէջ ցարդ ընդհանուր երեւոյթ մ'էր որ բարոյական ծանր թերութեանց մասին այրն առաւել ազատութիւն կը վայելէր քան կիներ: (Կարծեմք միայն Սիոփոյի մէջ բողոքականութեան խտտակրօն մի ձեւը թոյլ չէր տուած այս անհաւասարութեան. բայց երեւելի պարագայ մը չէ այս: Անգլիական օրէնքին մէջ իսկ դեռ կայ սոյնպիսի խտիր մը): Ֆրանսայի մէջ ստէպ կը տեսնուէր որ այր մը իւր կինը անհաւատարմութեան պատճառաւ ամուսնական բաժանում կը ստանար դատարանէն, հանդերձ մի քանի ամսոյ բանտարկութեամբ կնոջ, մինչ այրական անհաւատարմութիւնն եղեւնական դործ մը կը նկատուէր կարի հազուադէպ և գրեթէ անհաւատալի պարագայի մը մէջ միայն. այսինքն՝ երբ այրը բաւական անխելք լինէր հոմանիս իւր օրինաւոր կնոջ հետ նոյն տան մէջ պահելու համար: Բայց եթէ հոմանիս քոյի տան մէջ էր, խնդիրը կը փոխուէր: Շնորհիւ բարեփոխման մը, զոր Ֆրանսայի երեւելի բողոքական հովիւ մը, Պ. տը Բրէսանսէ, գուցէ սկովտական օրէնքէն ներքին չեալ, յաջողեցաւ ընդունել տալ Ֆերաչոյտին, անհաւատարիմ այրերն այսուհետեւ անհաւատարիմ կանանց հետ նոյն պատիժը պիտի կրեն: Մարգարէական ողբոյ պէտք չկայ գուցակելու համար թէ Ֆրանսական օրէնքին այս նոր տրամադրութիւնը կոչուած է յեղափոխութիւն մը մեծանել ընկերային բարուց մէջ: Այրերը կարող չպիտի լինին խաղաղ ամուսնական պարտաւորութեանց հետ: Կանանց ձեռամբ դատարաններու առջեւ քաջուելու, հանրային պարտաւանայ նշաւալ լինելու, և դատարան պատիժներու երթարկուելով՝ գուցէ պատուաւոր ու շահաւոր ամուսնութեան մը կառուելը լուծուած տեսնելու ծանր պատահականութիւնք թեթեւաբարոյ էրկներու համար բաւական ազդ ու արդեւքներ պիտի լինին: Այս միայն իդական սեռն, այլ մարդկութիւնն ընդհանրապէս այս մասին երախտապարտ պիտի մնայ Ֆրանսական օրէնքին:

Բայց արդեօք նոյն դիտողութիւնը կըրնա՞նք ընել Ամուսնալուծութեան օրէնքին ուրիշ մէկ նորութեան վրայ, որով ամուսնութիւնը լուծելի են անհաւատարմութեան աններելի և անտանելի ոճրագործութենէն զատ հազար ու մէկ մանր և երբեմն երկրորդական պատճառներով ալ: Մարդ մը եթէ աքսորման կամ չղթայալալ աշխատութեան դատապարտուի, կինը կրնայ խզել ամուսնական կապը՝ պարզապէս դատարանին ցուցնելով ամուսնոյն դատաւճիւր: Մէթէ կրնա՞յ ըսուիլ թէ այս տրամադրութիւն լիովին ի հաշիւ կ'առնու ամուսնական կապին անխելութիւնը Դժբեխտութեան մէջ ըսկ, և թէ անխառն բարեք մը պիտի լինի ընտանեաց համար: Արի՜ տրամադրութեամբ մը, ծեծ ուսող ամուսնին իրաւունք ունի ամուսնալուծութիւն պահանջելու: Եւրոպական բարեկիրթ ընկերութեան մը մէջ հասկնալի է որ դանակոծութիւնը վայրագութիւն համարուի, և վայրագ ամուսնէ մը միանգամ ընդ միշտ բաժնուելու իրաւունք տրուի ակարկողին: Բայց եթէ այսպիսի յօդուած մը դուրս ասիական ժողովրդեան մը ամուսնական օրինադրքին մէջ, կը վախճանք թէ չլուծուած ամուսնութիւն չպիտի մնայ նոր օրէնքին հրատարակումէն մինչեւ վեց ամիս: Այսպիսի թերակիրթ հասարակութեանց մէջ կին ծեծելու պարտաւելի սովորութիւնն ինքնին չի ցուցներ բնաւորութեան նոյն աստիճանի վայրագութիւն և անդթութիւն, ինչ որ ստուգապէս պիտի ցուցնէր Բարկի կամ Լոնտոնի ընկերութեան մը մէջ: — Նոյն տրամադրութեան մէջ (է+է և «էլ է») կը հասկցուին ամուսնոյ միոյն գինովութիւնն, և ամեն նիւթական զրկանք ու տանջանք, զորս մին կուտայ միւսին: Մեր բարի հայ կիներ չեն կրնար երեւակայել թէ իրենց եւրոպացի ընկերուհեաց մէջ հազուադէպ չեն այնպիսիներ, որոց ծայրայեղ արեւցոթիւնն այսուհետեւ իրենց այրերուն պատճառ պիտի ընծեն ամուսնալուծութեան, — տղեղ մութութիւն մը, զոր Թուրքիոյ մէջ տղեղ սեռին վրայ միայն տեսնելու վարժուած են կանայք: Այս պարագայք վերեւ յիշուածէն ծանրագոյն են թերեւս: Արեւցող այրը կամ կինը միանգամայն անդթութիւններ կրնայ դործել, դէշ օրինակ՝ տալով միշտ

աղայոց, որոց շահերն յատկացէս ի հաշիւ առնուած են ամուսնալուծութեան խնդրոյն մէջ:

Բայց ի՞նչ պէտք է ըսել այն դրէթէ անսահման աղատութեան զոր ամուսնալուծութեան կուտայ նոր օրէնքին այն յօդուածն որ ծանր թշնամանաց կամ նախատանաց (հեթէ-ը կըսէ) համար կը թոյլատրէ ամուսնութեան խաբարն: Այս բառով կը հասկցուին ամուսնոյ մը կողմէ միւսին դէմ ուղղեալ հայհոյութիւնը, ի մէջ այլոց՝ նախատեալ ամուսնոյն ընտանիքն ու ծնողքն անպատուող ծանր խօսքերը: Ֆրանսայիք, ամեն բանի ծաղրական կողմը գտնելու հակամիտութեամբ, լուրջ նշանակութիւն չեն տար այս յօդուածին: Ղիտելով թէ էրկան կողմէ կնոջ ընտանեաց դէմ ուղղեալ հայհոյութեանց մէջ զոքանչն անպատուող անքաղաքավար խօսքերն անպատշաճ մեծամասնութիւն մը կը կազմեն, Բարիդիք այս յօդուածն հաստատեալ կը կարծեն « ի պաշտպանութիւն զոքանչներու »: Բայց իւր զոքանչի դէմ հայհոյող այրը սովորաբար հայհոյիչ մէկը պէտք է լինի. որովհետեւ անհնար է ըմբռնել մտաց եւ բարուց վիճակ մը, յորում սովորաբար հայհոյիչ չեղող այր մը անպատճառ իւր զոքանչի դէմ հայհոյելու պէտք մը գդայ: Աւերմն, շնորհիւ ֆրանսական նոր օրէնքին, իրենց կանանց կողմէ ի դատ հրաւիրուելու և ամուսնական յարկէն վճարուելու պատժոյն ենթակայ են ոչ միայն անհաւատարիմ, կամ ծեծող, կամ արբեցող, կամ իւր կիներն անօթի ձող, այլ նաեւ հայհոյիչ էրիկներն: Անշամք գեղեցիկ սեփի ոչ եւս իրաւունք ունին գանդատելու թէ, ամեն անգամ որ ամուսնական և ընտանեկան օրէնքներ շինուին, իրենց իրաւունքները դիտմամբ կը զոհուին արանց: Ահա՛ եւրոպական խորհրդարան մը, յորում՝ կարծենք՝ կիներն անգամ չկայ, որ իւր երկու ժողովներով բոլորովին սուղեական հաշիւը (կնահաճոյ ընթացք) մը կը ցուցնէ տար սեփին: Օրէնսդրական այս նոր ուղղութիւն արդ արեւ յառաջդիմութիւն մ'է ինքնին: Բայց ինչպէս կիները դատպէս արանց ստորադատող օրէնսդրութիւնն ունեցած էր իւր ծայրայեղութիւններ անյկելոյն մէջ, սպաղապի մէջ ալ յանուն իդական իրաւանց օրէնսդրական ծայրայեղութեան:

Թիւններ տեսնելու պէտք է պատրաստուինք:

* * *

Ինչպէս ըստ բաւականին երեւցաւ վերոյիշեալ տրամադրութեանց քննութենէն, Ամուսնալուծութեան ֆրանսական օրէնքին ձգտումն այս է որ երբ այր և կին անհաշտուելի կերպիւ պաղած են իրարմէ և առիթ չեն փախցներ զիրար բարոյապէս և նիւթապէս թշնամանելու, զանոնք բարոյապէս ոչ եւս միացնող կապին օրհնապէս լուծումը ներելի պիտի լինի: Մինչ չլիցայակաւ աղատութեան դատաւճիռն ինքնին ամուսնալուծութեան իրաւունք կուտայ կնոջ, թշնամանում լինելու փաստով կիներ կրնայ խնդրել ամուսնալուծութիւն՝ եթէ իւր այր գողութեան պատճառաւ հասարակ բանտարկութեան դատապարտուած է, կամ խաբէութեամբ (հարբէ) Ակումբէ (ֆլէպէ) մը կամ Սակարանէ (Պարայէ) մը արտաքսուած է, կամ պաշտօնական և արուեստական տապաքէպէն վճարուած: Այս ամեն անհաճոյ պարագայից մէջ, յայտնի է թէ այրը կ'անպատուէ իւր կրած ընտանեկան անուն, և ընտանեկան անպատուութեան հանդուրժել չուզող պատուաւոր կնոջ հետ, էրկան մէկ ձախողութենէն օգուտ քաղել ուզող թեթեւութիւ կ'են հաւասարապէս աղատ են իրենց վշտաց փոփանքը կամ իրենց յոյսերու կատարումը փնտուել ամուսնալուծութեան լայնարձակ հովանոյն ներքեւ:

Այսչափ ընդարձակ կիրառութեամբ օրէնք մը, որոյ ամեն պարագայները մի առ մի ճշդ եւ իրեն անհնար է, շատ զործ կը խոտտանայ ֆրանսացի փառաբանաց: Հարկ է երկար ժամանակ խնամով արձանագրել գլխաւոր դատարանաց վճիռները, տեսնելու համար թէ վերեւ յիշատակեալ գլխաւոր պարագայք ինչպէս պիտի մեկնուին իրենց մանրամասնութեանց մէջ: Բարեբախտապէս, ամուսնալուծութեան դատերն երդուեալներու (ժյւրէ) վճռոյն չափով թողուին, այլ մինչեւ ցարդ ամուսնական բաժանմանց խնդիրները տնօրինող դատարանաց մէջ պիտի որոշուին երեք դատաւորաց սուջեւ: Ֆրանսացի երդուեալք (1)

(1) Հասարակ քաղաքացիներ, ամբաստանելոյն

չափազանց զգայնութեան աննախանձելի համբաւ մը հանած են : Ճարտարախօս փաստաբան մը, դատի մը սրտայոյզ մասերը պարզելով, կամ տկար սեռի անդամի մը կրած զրկանքն ստուարացնելով, նոցա նըպատաւոր վճիռն ստանալու ապահով է : Երգութեալք չափ անդամ մարդասպանութեան ոճրին իսկ աչք կը դոցեն, բաւ է զի փաստաբանն յաջողի նոցա սիրտը չարժել այն մտային կամ բարոյական կացութեան վրայ ուր կը գտնուէր ոճրագործն, հաւանօրէն սիրային արկածի մը պատճառաւ : Այս օրինակ դատաւորաց առջեւ, ամուսնական կապերու անխզելիութեան կարեւորագոյն վարդապետութիւնը չափ պիտի տկարանար, և արտասանեալ դատալէիք օրէնքին արդէն լայն սահմաններն աւելի լայնցնելու արդիւնքը պիտի ունենային ըստ ամենայն հաւանականութեան : Բայց այս երկիւղ տեղի չունի քանի որ արուեստով դատաւոր եղող երէք անձինք առանց երգութեան մշտնութեան մտիկ պիտի ընեն ամուսնալուծութեան խնդիրներն :

Նրբ աղերսագիր մը մատուցուի ամուսնոց միոյն կողմէ, դատարանին նախագահն երկու կողմերը պիտի հրաւիրէ առանձնակի տեսակցութեան մը, յորում փորձ մը պիտի փորձէ զանոնք հաշտեցնելու, — արտադրածեւակերպութիւն մը, որ զրէթէ երբեք իւր նպատակին չի հասնիր, բայց անհամար դատաւորներու առիթ կընծայէ յորդորներ կարդալու ամուսնական ներողամտութեան կարեւորութեան վրայ : Նիթէ ամուսնալուծութեան պահանջումն հիմնեալ է այնպիսի պատճառներու վրայ որք սուղիկային մէջ հաշտութեան գոյացումն անյուսալի չեն ցուցներ, դատաւորք արտօնեալ են տասն երկու ամիս յետաձգելու դատին ունիւնդրութիւնն, հրամայելով որ երկու կողմերը նոյն միջոցին դատուած ապրին : Նրբ հաշտութեան փորձն ի դերեւ ելած է, դատարանը կը լսէ զանխակ նիստի մէջ եր-

գասէն առնուած, որք, երկու կողմին վկայութիւններն ու փաստերը լսելով, կ'որոշեն թէ ամբաստանութիւնն հաստատուած է թէ ոչ : Հաստատական պարագայի մէջ, դատաւորք միտն պատիժ կ'որոշէ : Եթէ ժխտական է երգութեան վճիռն, ամբաստանեալը կ'արձակուի :

կուց կողմանց վկայութիւնները : Փաստաբանութիւնը կրնան հրապարակային նիստի մէջ տեղի ունենալ, Ամուսնալուծութեան վճիռն հրապարակային նիստի մէջ կ'արտասանուի, և քաղաքային տոմարէն ալ ամուսնութեան արձանագրութիւնը կը ջնջուի նոյնպէս վկայից առջեւ : Բայց այս վերջին ձեւակերպութեան չհասած, դատարանական վճիռն, ենթադէյ է վերաքննութեան, և օրինական կէտերու վրայ վճարեկութեան : Առն պահանջմամբ լուծեալ կիւնը կը կորուսանէ իւր ամուսնական անուն, և կը պատժուի եթէ չարուանիէ կրել զայն : Կը կորուսանէ նաեւ իւր օժիտ : Այրն որ կ'նոյ պահանջմամբ լուծեալ է, կը կորուսանէ նաեւ նախնայէս ամեն ինչք և ստացուածք, զորս կ'ենը կրնար բերած ինեւ իրեն որպէս օժիտ : Լուծեալ ամուսինք ազատ են կնքել երկրորդ ամուսնութիւն, մինչեւ իսկ նորէն իրարու հետ ամուսնանալ, եթէ մին սոյն միջոցին ուրիշի մը հետ կարգուելով, երկրորդ անգամ չէր լուծուած : Բայց եթէ լուծեալ այրն երկրորդ անգամ կարգուելէ յետոյ իւր կին մեռնի, կրնայ նորէն առնուել իւր առջի կին, և փոխադարձապէս : Լրագրաց արգիլեալ է հրատարակել ամուսնալուծութեան դատերու մէջ իրեւ վկայութիւն պատմուած իրողութիւններն, որք անապրակոյս դայթակղական բնութիւն ունին ըստ մեծի մասին, — ճշմարիտ չափ հանրային բարոյից և ընտանեկան պատուոյ տեսութեամբ, բայց իրական կորուստ մը լրագրութեան համար, այնպիսի ժամանակի մը մէջ ուր լրագրի մը արժէքը կը դատուի իւր պարունակած գայթակղալից բայց հետաքրքրաշարժ և արտայոյզ պատմութեանց առատութեամբ, և ո՛չ թէ լուրջ նիւթոց ճոխութեամբ :

* * *

Բնական է յուսալ թէ, Ամուսնալուծութեան այոյալի օրէնքով մը, Ճրանապէս առածի կարգ անցած թեթեւաբարոյութիւնը տակաւ առ տակաւ տեղի պիտի տայ ամուսնական պարտաւորութեանց աւելի լուրջ ըմբռնումի մ'առջեւ : Կը պատմուի թէ ութսուն տարի առաջ, երբ Ամուսնալուծութեան առաջին օրէնքը կը քննուէր Պետական Խորհրդոյ մէջ, Նարոէոն Ա., որ իրեւ աշխարհակալ ար-

դէն վատուած համբաւոյն վրայ կ'ուզէր աւելցնել օրէնսդրութիւն վարչային մարդու մը համբաւը, սինդեյ որ ամուսինը չկարենան լուծուիլ քսան տարւոյ միութենէ մը յետոյ. զի մինչեւ այն ժամանակ իրարու թերութեանց տանիլ կը վարժուէին հարկաւ : Այժմեան օրէնքին մէջ հետքն իսկ չկայ սոյնաբար փախկարտութեան մը : Ո՛չ օրէնսդրութեան, ո՛չ ալ քաղաքականութեան մէջ, իրաւախոհութիւն (*philosophy*) ըստած բանը Ֆրանսացւոց համար չէ : Ամեն սկզբունք, ամեն վարչային կամ քաղաքական դրութիւն իւր ծայրագոյն հետեւանաց տանելու հակախտութիւնը Ֆրանսական մտաց որոշ մէկ յատկանիւն է : Արդ, ներկայ օրէնքին մէջ իւր ամբողջ խնամտով գործադրուած կը տեսնենք այն սկզբունք թէ, երբ ամուսնական կենաց մէջ ծագի որ և է դժբանդակ պարագայ, դրապէս մնասող ամուսնութեան էական պայմանին, որ է սէր և միաբանութիւն, ամուսնալուծութիւն ձեռք բերել կարելի է : Անխտիր մերժութեան ամեն բարեփոխիչ առաջարկը, որը նպատակ ունէին կրճատել մնասեալ կամ զրկեալ ամուսնոյ մը ազատութիւնը լուծում ստանալու մասին : Այժմ փոխադարձ հաւանութեամբ ամուսնալուծութիւնը վերացուեցաւ 1804ի օրէնքէն, այն նկատումով էր որ իրաւաբէ կը վախճուէր թէ չատ ամուսինը այս ձեւ գաղափարութեան պիտի դիմէին գայթակղութեան տեղի չթողու համար : Ամուսնալուծութեան զեղծման դէմ ընկերութեան գլխաւոր երաշխաւորութիւնը սա է որ, լուծուիլ ուզող ամուսինը պիտի պարտաւորին երկիցս խորհիլ իրենց ներքին կոնսենսին և անպատուարելի պատմութիւններն ի հրապարակ չհանած : Փոխադարձ հաճութիւնն հակառակախօս վիայութեանց ու փառաբանութեանց պէտք չը թողլով, ամուսնալուծութեան ի բնէ արատաւորիչ հետեւանքը կը բաւնայ, որով ամուսինը չնչին պատճառներով կրնան ամեն վայրկեան յամուսնալուծութիւն դիմել, և գաղափարաց ողջմտութիւնն ու ազդեցութիւնն այս պարագայի մէջ նոյնքան օգտաւար չեն կրնար լինել, որքան երբ մէկ կողմին միւսին դէմ գաղափարաբանութեամբ կը խնդրուի ամուսնալուծութիւն : Ո՛չ, ամուսնալուծութիւնը խաղաղիկ չպիտի լինի. այս

չէ՛ Ֆրանսացի օրէնսդրաց նոյաւարը : Բայց նոր օրէնքը կ'ընդ գրիէ ամեն երեւակայելի պարագայներ, յորս ամուսնական լուծն անտանելի դարձած կը համարուի : Ամուսնութիւնն իւր հանդիսաւոր և սուրբ հանգամանքին մէջ պիտի պահուի և պիտի լուծուի երբ այս հանգամանք արատաւորեալ է : Թոյլ չտալի արուի որ ամուսնական կապին անխզելիութիւնը քաջալեր կամ պատրուակ տայ անբարոյականութեան : Այրն, ամուսնական կապին անխզելիութենէն ապահով, փաղաքշուհներու հետ կեանք չպիտի կըրնայ անցունել, կամ ամուսնական պարտաւորութիւններն ոտնակոխ ընել : Արն ալ, այրական անհաւատարմութենէ զգածեալ, վրէժ չպիտի կրնայ լուծել տուրական ասպարէզին մէջ, ինք ալ ուրջներ պիտի չընէ : Արէժ պիտի լուծէ, բայց գաղափարին մէջ միայն : Ֆրանսական վիպագրութենէն և թատերգութենէն պիտի անհետանայ բարիքեան վէպերուն այն տիպար անհատականութիւնը. զրկեալ կինը, չարագործին, գինեմոլին, խաղամոլին, վառչուէր խառնադնաց էրկան կինն, որոյ հառաչանքն ո՛չ ոք կը լսէ, բայց եթէ հրապուրէ զէմբով և յանկուցիչ լեզուով սատանորդի տնտիւսժուէն, որ կուզայ սիրուիլ զնա, ամուսնական լուծին գաղափարէն մոռցնել նմա, դողնալով անհաւատարիմ այրէն ինչ որ ինք ալ գողցած էր իւր դժբախտ կնոջմէն : Այս փոխադարձ գողութեանց վերջ պիտի արուի, և Պարոնայք Վիսրասանք այլուր պիտի փնտրուեն իրենց զգայական փրկստիպանութեան նիւթերը :

Բայց Ամուսնալուծութեան օրէնքին արդիւնքը պիտի լինի ո՛չ միայն դժբախտ ամուսնոց ցաւերուն դարման տանիլ, այլ նաեւ կանոնաւորել այն բաժանեալ ամուսնոց վիճակն, որը թէեւ իրարու նկատմամբ ամեն ամուսնական պարտաւորութենէ զաւելւած եւ այլ ևս, բայց օրինօք լուծեալ չլինելով, իրենց վիճակին բերմամբ շարունակ օրէնքը բռնաբարել կը փորձուին : Նրկորդ ամուսնութեան մը կարելիութիւնը վերջ պիտի տայ բազում անբարոյական կենցաղավարութեանց : Ամուսնոյն անտանելի զեղծմանց պատճառաւ բաժնուելու գաղափարով ազարկելու կինն, որուն կը վերաբերի նաեւ զուգակց խնամատածութիւնն, իրեն համար

որ ամուսին մը և իւր զաւակաց նոր հայր մը պիտի կրնայ գտնել, փոխանակ բարոյական և նիւթական մեծագոյն թշուառութեան մը վնաս մէջ խորատուղեւու։ Անդու թ, անհաւատարիմ կնոջ մը դժբախտ այրն ալ, իրաւամբ բաժնուելէ և զաւակներն իւր խնամոց ներքեւ առնել յետոյ, ո՛չ ինք անկին պիտի մնայ, ո՛չ ալ իւր զաւակներ՝ մայրական խնամքէ զուրկ։

Վերջապէս, ամուսնալուծութեան կարելութիւնն ամուսնանալ ուղղուելով պիտի պարտաւորէ լաւ ընտրութիւն ընելու, որ կարծեմք փոքր առաւելութիւն մը չէ։ Ամուսնութեան անլուծելիութիւնն ապահովութիւն մը կը համարուէր թէ ամենէն անյարմար ամուսիններն ալ ի միասին կրնան ապրիլ, և ի վերջոյ իրարու յարմարել։ Հետեւեալէս, լաւ ընտրութեան, փոխադարձ սիրոյ և այլ բնական պատշաճութեանց տեղ, աւելի կը նայուէր ամուսնութեան ընկերացին, նիւթական և գրեթէ լոկ դրամական կողմին։ Բայց հիմա սլ տի հասկցութիւն որ, եթէ ամուսնը բնական յարմարութիւն չունին, պիտի կրնան լուծուիլ, և յայնժամ յանցաւոր կողմը պիտի կորուսանէ ամուսնութենէն քաղած նիւթական բոլոր առաւելութիւնները, միայն տալով նաեւ իւր պատիւն։ Այսուհետեւ, գրամոծիտի (բարեբաւ) սիրոյն համար երջտասարդ մը չպիտի կրնայ կարգուիլ տարիքն առած կամ ուրիշ կերպիւ իրեն չյարմարող կնոջ մը հետ։ որովհետեւ երբ այս կնոջ նկատմամբ անհաւատարիմ գտնուի, ամուսնութիւնը կրնայ լուծուիլ, և ինք կը գրկուէ ձեռք բերած նւթական չափէն։ Այս, նիւթական հարստութեան միայն նայելով, տարիքն առած մարդու մը հետ կարգուող դեռատի օրորոյն այսուհետեւ երկիցս պիտի մնած է սոյնպիսի անյարմար ամուսնութիւն մը չլինած։ որովհետեւ երբ իւր հօրը տեղը բռնող ամուսնոյ մը նկատմամբ անհաւատարմութեան մէջ գտնուի, կրնայ՝ ամուսնալուծութեան պատճառաւ՝ կորուսանել հարուստ ամուսնոյ մը կինը լինելու բոլոր ընկերային և նիւթական առաւելութիւններն։ Այս յայտնի պատճառներով, անշուշտ հող պիտի տարուի ամուսնութիւնը լոկ չահագիտութեան միջոց ջնկատելու, այլ աւելի լուրջ բան մը համարելու, և այն բնական մարմանաց մէ-

կնքելու, որք միակ ապահով երաշխաւորութիւնն են այսպիսի միութեանց տեւականութեան։

Մեր համոզումն է ուրեմն, որ Ամուսնալուծութեան օրէնք մը բարեկազմ ընկերութեան մը անհրաժեշտ տարրերէն մին է, և բարիք մ'է մարդկութեան ընդհանրապէս։ Յաջորդ յօդուածին մը մէջ պիտի ջանանք ցոյց տալ թէ, ինչ որ բարիք մ'է ընդհանուր մարդկութեան, չի կրնար չարիք լինել Հայ Ազգին։

Բ. Ք.

ՎԻՐՈՒՅ. — Նախընթաց թուոյն կրթական յօդուածին դանկի ծաւալման կամ ընդլայնման վերաբերեալ պարբերութեան մէջ, « տասը դարձեալ մէջ 6 հազարորդ ամեղր կը դառնի » խօսքը սկսեց է կարդալ « տասը դարձեալ մէջ »։

ՕՐԱԳԻՐ ՆԻ ԼՐԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Մեծ դեր մը կը ընու օրագիրը քաղաքակրթութեան մէջ. իւր ազդեցութիւնը՝ ազդեց և ընկերութեանց կեանքին վրայ անքան զգալի եղած է մեր օրով որ մինչեւ անգամ « Յօթերորդ մեծ Պետութիւնն » է ըսուեցաւ։ Եթէ չամապանց ալ երեւէր այս բաղդատութիւնը, սա ստոյգ է որ մերթ հանրային կարծեաց ուղեցոյց, մերթ անոր արձագանքն ու հայելին, բայց յաւէտ հզօր գործի մ'է յառաջագնացութեան օրագիրը ճարտար ու փափուկ ձեւերբու մէջ։

Բայց ուսկից կուգայ, երբ ծագում կ'առնու օրագիրը. ահաւաստի հարցում մը որ կ'երթայ հայցել իւր պատմաստանն հեռաւոր այն ժամանակներէն ուր մարդիկ զգացին, թերեւս առաջին անգամ, թէ Արատտեղի քաղաքակրթեալ կենդանիներն են։

Աւ իրաւամբ որ մարդ, որ ընկերութիւն՝ քիչ չաա զարգացեալ մտաւորապէս՝ կրնայ ապրիլ այսօր առանց օրագրի։ Մեք տեսանք անձնք որք ըսին թէ գինով պէս կ'զգային ինքզինքնին որովհետեւ քանի մը օր անցուցած էին առանց լրագիր վերձանելու։ Մեք չենք կրնար չհամակրել այնպիսի հիւրի մը որ ամենուս տունը կը մտնէ և խնայական ճարակ մը կը բերէ մեզի և հեռաւոր աշխարհաց, և բացակայ եղբարց հետ

յարաբերութեան մէջ կը դնէ իւր ասպնջականները :

Փափաքելի էր հատորիկ մը գրուած տեսնել Հայ օրագրութեան վրայ , ինչպէս զբոսեցաւ Հայ Մատենագիտութեան Պատմութիւնը : Հայերէն լրագիրներու հաւաքածոյ մը կրնար դիւրացունել այդպիսի աշխատութիւն մը , այլ մեք շատերու հետ հետաքրքիր եղանք իմանալու թէ Հայոց մէջ որ թուականին կ'սկսի լրագրութիւնը , որն է մեր անդրանիկ թերթը . քանի՞ թերթ ունեցանք մինչեւ այսօր , ի՞նչ էին անունները . ո՞ր հրատարակուեցան . խմբագիրք ո՞րք էին . ի՞նչ ուղղութիւն ունեցան . ի՞նչ լեզու , ի՞նչ արդիւնք , եւ փորձեցինք պըրպտել մեր թղթերը , բարեկամաց զբաղ արանները , յուսալով զանեւ հոն ուսումնասիրելու տարերքներ եւ աւարտել անոնցմով մի տեսութիւն համազգային լրագրութեան վրայ :

Մեր խուզարկութեանց մէջ նախ եւ յառաջ պէտք զգացինք լրագիրներու ամբողջ ցանկի մը որոյ օգնութեամբ թերեւս կարելի լինի մեզ գտնել հետզհետէ մեր չունեցած թերթերը . եւ որովհետեւ կը վարանինք ըսել թէ մեր ցանկը ամբողջութեան եւ ճշգրտութեան ամեն հանգամանքն ունի՝ ուստի յորդորուեցանք հրատարակութեան սալ զայն , որպէս զի գոհացնենք ի մասնէ շատերուն հետաքրքրութիւնը եւ առիթ մ'ընծայենք ատով ազգային մամուլ կենացը տեղեակ անձանց որ բարեհաճին ըյս սխուէլ մութ կէտերու վրայ :

Ահաւասիկ մեր ցանկը .

- 1793 Ազգարար (Գրաբառ) Կալկաթա մինչ 1797
1799 Տարեգրութիւն (Պարբ.) Վենետիկ (Մտիթարեանք) մինչ 1802
1803 Եղանակ Բիւզանդեան (Տարեկ.) Վենետիկ , Հ. Գ. Ինճիճեան մինչ 1820
1807 Յիշատակարան (Պարբ.) Վենետիկ
1812 Դիտակ Բիւզանդեան , (Կիսամսեայ) Կ. Պոլիս Արշարունեաց Ընկ. մինչ 1817
1830 Լրոյ դիր Օսմանեան հօր Պետութեան , Պոլիս , պաշտօնական որ յետոյ եղաւ Թաղվիմը Վազայէ (Հայերէն) , մինչ 1832
1839 Շտեմարան պատանի գիտելեաց

(Շաբ. Հան.) Իշլիք , Բողքալան Գարուիչք , մինչ 1842

— Ճէրիաէյի Հափաթիս , Կ. Պոլիս :

1840 *Արշարար Արարատեան (Շաբ.)

Իշլիք , Գ. Պաթարարեան :

— Ազգարար Բիւզանդեան (Շաբ.)

Պոլիս , Խաչատուր Ոսկանեան , մինչ 1845

1845 *Բաղնալէս (Հանդէս) Վենետիկ ,

Մտիթարեանք :

1844 Հայրենասէր (Թերթ) Իշլիք , Սե-

լուսեանց :

1845 Ազգասէր (Լրագ.) Կալկաթա , Մ.

Թաղիաթեանց դաղարեալ 1848

վերստին հրատարակեալ 1850—51

— *Աւետարներ (Լրագ. Կրօնական)

Պոլիս , Միւստարք :

1846 Հայելի (Լրագիր) Կալկաթա :

— Կովլաս (Շաբաթաթերթ) Թիֆ-

լիս , Գ. Կարինեանց — Մ. Պատ-

կանեան , մինչ 1850

— Սուրհանդակ Կ. Պոլսոյ (Լրագ.

Շաբ.) Պոլիս , Մ. Աղաթօն եւ Կ.

Չամուրճեան :

— Հայաստան (Շաբ.) Կ. Պոլիս ,

Մ. Աղաթօն եւ Կ. Չամուրճեան :

1847 Յայտարար (Շաբ.) Կ. Պոլիս :

— Եւրոպա (Շաբ. Կիսամսեայ) Վէն-

նա , Մտիթարեանք , մինչ 1865

1848 Բանասէր Մատրաս , Ս. Պ. Յով-

հանէսեան :

— Սուրհանդակ Բիւզանդեան Պոլիս :

1849 Ուսումնասէր (Թերթ) Միսկաբոր ,

վիմագրոյմ :

1850 Արարատ (Թերթ) Թիֆլիս , Մ.

Մսերեան եւ Գ. Պատկանեան մինչ 1851

— Հայրենասէր (Թերթ) Նիկոկիթա ,

Ա. Մուրատեան :

1851 Բուրաստան (Ստաթերթ) Կ. Պո-

լիս , Ստաթիոյ Սահակեան վար-

ժարանի աշակերտք :

— Բանասէր (ստաթերթ) Կ. Պոլիս ,

Ի. Հիսարեան մինչ 1859

1852 Նոյեան Ազանի , Կ. Պոլիս , Գ.

Մարկոս եւ Աղրո մինչ 1853

— *Մասիս (Լրագ. չաթթ. ամենօր-

եայ) Կ. Պոլիս , Կ. Իւթէճեան :

— *Մէճմուսը Հափաթիս (Շաբթ.) Յ.

Վարդանեան , եղեւ Մէճմուսը

- Ախպար Պոլիս
- 1855 Արիի Արարատեան (Ամառգիր) Իշխիր, Տէտէեանք :
- Զոհալ (Ամառգ.) Ն. Տ. Պոլիս, Յ. Զամուրճեան :
- Հայրենասէր, Իշխիր, Մ. Սէլուսեան :
- 1854 Ընտանի Իմաստասէր, Պոլիս, Աղ- Գասիրական Ընկերութիւն :
- 1855 Ասողիկ Արեւելեան, Կ. Պոլիս, Մեքսիկական Ընկերութիւն :
- Ախպարը Գոնաթանթիլի (Լը- րադիր) Ռ. Ք. Էրքճեան, Պոլիս :
- Արծուի Վասպուրական (Ամառ- Գիր) Պոլիս և յետոյ Վան, Մ. Վ. Խրիմեան :
- Մասեաց Աղաւնի (Ամառգիր) Փա- րիզ և յետոյ Թէոդոսիա :
- Խմբագիրը
- Ս. Թէոտորեան) Վարդապետը
- Գ. Այվազովսքի)
- Ա. Գալֆայեան
- Խ.
- Թուրակ Հայկազնեան, Իշխիր, Տ. Վրթանէս :
- 1856 Արեւմուտք (Լրագիր) Ս. Ոսկան- եան, Փարիզ :
- Զուարճախօս, Կ. Պոլիս :
- 1857 Երեւոյ (Կիսամակայ) Կ. Պոլիս Զամուրճեան. (Զոհալի չար.)
- Մուսայր Մասեաց (Ամառայ) Կ. Պոլիս, Արամ Ճ. զվէճեան :
- 1858 Մեղու Հայաստանի (Շաբ.) Թ. Ք- լիս. Ն. Ս. Մանդիկեան, յետոյ Սիմէօնեան :
- Հիւսէւսափայլ (Ամառգիր) Մոս- կուա, Ս. Նաղարեանց սինչ 1862
- 1859 Ճուրջալ (Ամառգ.) Մոսկուա, Մ. Մսերեան :
- Արեւելք, (Շաբ.) Փարիզ Ս. Ոս- կանեան :
- 1859 Մեղու (չար.) Կ. Պոլիս, Կ. Աղ- վաճեան սինչ 1870
- Մ. Էնտալի Էրճաս (Շաբ.) Կ. Պոլիս, Կ. Փանոսեան :
- 1860 Փարիզ (Լրագ. Շաբ.) Փարիզ, Ա. Մուրադեան սինչ 1865
- Արեւելեան Դար (Շաբ.) Կ. Պո- լիս, Գ. Տէյիմէնճեան :
- Սէր (Կիսամակայ) Կ. Պոլիս, Ա.

- Ճէվաշիրճեան :
- Թուրակ Հայաստան Ախպարի Իշխիր, Հիւսէյնճեան :
- Կուռնի Հայոց Ախպարճի (Ամառ- Գիր) Թ. Ք. Քիւս, Մ. Աղաբէճեան
- 1861 Համբաւարեւ Ռուսոյ Մոսկուա Զարմայր Մսերեան :
- Միութիւն, (Շաբ.) Իշխիր, Ս. Վանանդեան տեւեց տարի 1 1/2
- Բնար Հայկական Կ. Պոլիս Գաբ- րիէլ Երանեան :
- Օսմանեան Երաժշտութիւն Կ. Պոլիս, Վ. Փափազեան :
- Թուրիլ (Հանդէս Հնդկաստանոր- եայ) Կ. Պոլիս Գր. Պալեան, Տէր Վրթանէս :
- Կիւլիւս (Հնդկաստանորեայ) յետոյ ամսեայ եղաւ Կ. Պոլիս, Մ. Իւ- թիւճեան :
- Մամուլ (Եւօրեայ) Կ. Պոլիս Գ. Այվազեան :
- 1862 Կիթառ (Ամառայ Հանդէս) Կ. Պոլիս, Տիկիլիս Ե. Կ. Եր. Հայ- կունի :
- Վարդ (Շաբաթագիր) Կ. Պո- լիս, Թ. Պեռեան, Ս. Բարսեղ- եան :
- Զեփիւռ Հայրենեաց (Շաբ.) Կ. Պոլիս, Մ. Գաբաւաճեան :
- Գարուն Հայաստանի, Իշխիր, Գ. Պարտիզլանեան :
- Ծագիլ Իշխիր, Գ. Զիլնիկեան :
- Արեւելք Իշխիր, Տէտէեան թիւ 2
- Դմակ Իշխիր, Տէտէեան թիւ 26
- Յուրթաշար Իշխիր, Ս. Փա- փազեան Տ. Կարապետեանց :
- 1865 Թուրիլ Պէքաւեան, Կ. Պոլիս Գ. Ալէաթճեան :
- Ժամանակ Կ. Պոլիս, Ս. Փափազ- եան :
- Վարդ Կարապետ Կ. Պոլիս Մարտ- Բաճ. Նիկողոսեան :
- Արծուի Տարնոյ Տարն, Գա- րեգիլ Սրուանճաւեանց
- 1864 Յոյս, Արմաշի վանք :
- Երկրագունտ (Հանդէս) Ման- չէսթէր, Կ. Պոլիս, Յ. Վ. Շահ- նաղարեան իսկ այժմ Ասիական Ընկերութիւն 85էն ի վեր :

- *Փռնիք (Լր. Շար.) Պոլիս Հ Ս.
Այստեղից :
- Հրախ (Շարթ.) Բէթէրսպուրի ,
Ռափ. Պատկանեան , (Գամ. Գա-
թիլայ) :
- (1) Հայկական Աշխարհի Կռուներ և
յետոյ Աշխարհ Հայկական (Ամ-
սաղիր) Ս. Ստեփանեան Թ. Ֆիլիս :
- Լուսափայլ (Հանգ. Կիսմանեայ)
Իզմիր , Գ. Ազճալեան :
- 1865 Արմաւենի (Հնդկաստանօրեայ)
Գաթիլի Աբրահամ Մուրաթեան :
- 1866 Ծիւն Աւարայրի (Ամսաղիր) Կ.
Պոլիս , Մ. Ազարէզեան , տեւեց
տարի :
- Հայկական աշխարհ , Թիֆլիս , Հ.
Էնֆիլէճեանց :
- Մանգրաւէի Էֆքերար (շարթ.) Կ.
Պոլիս , Կ. Փանոսեան :
- Ծիածան (շարթ.) Կ. Պոլիս , Կ.
Զուհանեան :
- Գարուն (Ամսաղիր) Թիֆլիս , Ս.
Մանտինեան Թիֆլիս :
- Վաճառական Թ. Ֆիլիս , Գ. Տ. Ա-
ղէքսանդրեան տարի :
- Ս օն (Ամսաղիր) Երուսաղէմ ,
Մ. արանուծիւն Ս. Յ. Վանուց :
- 1867 Օրմէի Մաթիւ , Կ. Պոլիս , Կ.
Էֆրազ Դարմաշ , Կարին :
- Ֆաթի (Պաշտ. Թերթ) Բերլիս :
- *Արարատ (Ամսաղիր) Էջմիածին
Պաշտօնական Հրատարակութիւն
Մայր Աթոռոյ , Խորէն Ստեփանէ
Կիր. Սրտեան :
- Երկր (Հանդէս) , Կ. Պոլիս , Թ.
Թէրլեան :
- Իրաւունք Իզմիր , Ս. Մաթիւ :
- Վարազայի Հափաթիս , Կ. Պոլիս
Կ. Փանոսեան :
- Թռչնիկ , Ն. Տ. Այրա Իսթեան Կ.
Պոլիս : Թիւ 2 :
- 1869 Խաւարկեալի (Լրագիր Հ.Տ.)
Պրուսա :

- Սրարատ (Օրագիր) Կ. Պոլիս ,
Մաթիւս Այլատեան , վերստին
կը սկսի :
- Եփրատ Կ. Պոլիս , Ս. Ֆէլէկեան :
- 1870 Դիտակ (Շարթ.) Կ. Պոլիս , Հ. Ս.
Իւթիւճեան :
- Սէտաի Հաղիպաթ , Պոլիս :
- Օրագիր Կ. Պոլիս , Օ. Խօճասար-
եան :
- Հորիզոն (Երկօրեայ) Գ. Մ. Էդա-
ճեան Պոլիս :
- *Հայրենիք (շարթ.) Ս. Վարդան-
եան , Մ. Մէլքեան , Բ. Պօղա-
ճեան Պոլիս :
- Փող Առաւօտեան , Կ. Պարոն-
եան Պոլիս :
- Մեղու (Եռօրեայ) Պոլիս :
- 1871 Ծիւն (Հ. Տ.) Սրտ. Կ. Ս. Մի-
նասեան , Խմբ. Ս. Կիւրճեան , Պո-
լիս :
- *Արեւելեան Մամուլ (ամսաղիր)
Իզմիր , Մ. Մամուրեան :
- 1872 Աւա (Լր. Շարթ.) Կ. Պոլիս , Յ. Բէ-
յիլեան :
- *Աւետարներ (Ամսեայ և Շարթ.)
Ամերիկացի Մ. Ե. օնարք Պոլիս :
- Դաստարակ (Մակրթ. Թերթ)
Թէրլու , Գ. Խաչիկեան :
- *Մշակ (շարթ.) Թիֆլիս , Գրիգոր
Արծրունի :
- 1873 *Լոյս (Հան. Շարթ. յետոյ Եռօրեայ)
Կ. Պոլիս , Հ. Դանաբեան , Մ.
Գաբամանեան :
- 1874 Թատրոն (Թերթ զաւելտական) Կ.
Պոլիս , Յ. Յ. Պարոնեան :
- 1875 Դիրոյ Ռ. Վ. Փաստամեան :
- Մ մոս (Հան. Եռօրեայ) Ս. Սա-
ղաեան և Յ. Ն. Պէրպէրեան :
- 1876 Երազիր (Ամերիկեայ) Կ. Պոլիս
Օ. Խօճասարեան :
- Թատրոն Բարեկամ Մանկանց , Յ.
Պարոնեան , Պոլիս :
- Լրագիր (Ամերիկեայ) Կ. Պոլիս ,
Ն. Թիւրքէնտեան :
- Բաշա Կ. Մաթիւ (Հ. Տ.) Պոլիս :
- 1877 Երբ Դար , Կ. Պոլիս , Խօճասար-
եան Պոլիս :
- *Թէրճմանը Էֆքերար (Լրագիր
Հան.) Ս. Սաղաեան , Տ. Ճիւլէ-

71

1 1/2

6

1 1/2

(1) Այս Թերթը Իրաւամբ կրնայ կոչուիլ Հայ
մամուլի Թափառական Հրէայի վառ զիւն 64 ի վերջերը
սկսած է հրատարակուիլ Թիֆլիս
74 ի վերջերը Ի Շուշի
78 ին Ի Բաղու
79 ին Ի Էջմիածին :

- էկեան :
- Փորձ (Ամառգիր) Թիֆլիս, Աբդ. Յովհաննէսեանց :
- Ապագայ (Օրաթերթ) Կ. Պոլիս, Արտ. Կ. Ս. Իւթիւճեան, Խմբ. Մ. Գաբամանեան :
- 1878 Հաւատարմութիւն (Օրաթերթ) Կ. Պոլիս, Արտ. Վ. Վիգէնթալ, Խմբ. Վ. Մուրատ :
- 1879 Փարոս Հայաստանի (Նրկամեայ) Մոսկուա, Զ. Մսերեան :
- *Պատկ (Լր. Բաղ.) Երեւան Վասակ Պապաջանեանց :
- 1880 Ծաղկաքաղ Ուսմանց և Արուեստից Կ. Պոլիս, Թ. Թէրզեան թիւ :
- Մէտօրայ (Գիտ. Հան.) Իզմիր, Գ. Մսերեան :
- 1881 *Ֆէլէք (Գիտ. Հան.) Կ. Պոլիս Յ. Պալլըճեան :
- 1882 *Բուրաստան Մանկանց (Կ'տանեայ) Կ. Պոլիս, Խմբ. Կ. Գարալիւբեան Հր. Ն. Պէրպէրեան և Տէօվէթեան :
- *Սրճադանք (չթթ.) Թիֆլիս, Ա. Յովհաննէսեանց :
- *Առողջապահական թերթ, Երեւան, Լեւոն Տիգրանեան :
- *Աղբիւր (Հանդէս) Թիֆլիս, Տ. Նազարեանց :
- *Գործ (Ամառգիր) Շուշի և Թիֆլիս, Ս. Հախումեան :
- *Վարժարան (Մեղրիթ. Թերթ) Թիֆլիս, Ն. Խոսրովեան :
- *Բարակն (չթթ.) Կ. Պոլիս, Ս. Իւթիւճեան :
- 1883 *Ղրական Շարժում (ամեայ) Կ. Պոլիս, Ե. Տէմիրճիպաշեան :
- *Ընտանք (Կիտանեայ) Կ. Պոլիս Հրատ. Արամ Աճեան, Խմբ. Ս. Գաբամանեան :
- *Լազտեր Դիողինեան (Նսօրեայ) Կ. Պոլիս, Արամ Աճեան :
- 1884 *Նոր Դար (Օրագիր) Թիֆլիս, Ս. Իսկանդարեան :
- *Արեւելք (Օրագիր) Կ. Պոլիս, Ս. Տամատեան, արտօնատէր :
- *Խ. կար (Ամառգիր) Կ. Պոլիս, Յ. Պարոնեան :

— Յոյ (Շբ. Լր.) Լատինատառ Հայ. Վարդա, Ա. Յովհաննէսեան :

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Աստղանշեալք դեռ կը շարունակուին : Կան դանազան թերթեր որոց սկզբնաւորութեան թուականը եայլն չեն ստուգուած տակաւն . այսպէս են

Գարուն Համապիւռ	Վարին
Երկրիկան Զեփիւռ	Տարսն
Մօտա. — Մուղլըք. — Տէղերք. (Հանդէս Զբօսալայ)	— Այստանք (Հ. Ռուս)

Մեղրիսեղեկեան, 12 թիւ և Լսծ. — Մանկավարժական թերթ ամեայ Յ. Տ. Յովհաննէսեան :

5

Արեւակ	Պոլիս	9 թիւ և Լսծ
Վայելք	»	Գալէնտէրեան
Լուսին	»	որ լուսնոյ մը կեանքն ըլլանք
Փնջիկ		քը ունեցեր է կրտսէն :

Յայտարարութիւն Երեւանայ

Իբրեւ սրբբերական հրատարակութիւն կը յիշեն ոմանք «Ճեմարան Գիտելեայ» մը : Զենք գիտեր թէ այս անուամբ հանդէս մը երբեք հրատարակուած է . բայց տեսնք այս անուն գիրք մը տպեալ ի Վենետիկ 1815 ին, Հեղինակութիւն Հ. Մանուէլ Բըժըլեանցի, որ զրաբառ և ոտանաւոր ուճով կը բացատրէ բնական գիտութիւններն . հետաքրքրական գիրք մ'է :

Զուգեցինք ցանկի մէջ դնել քանի մը թերթից անուններ որք ծրագրական վիճակի մէջ միայն մնացին են :

Զամուրճեան պատուելոյն Լ. Ռեֆ. Ա. Բէլէն Պոլիս 1860 ին, Միտաբեան Էֆէնաթի «Մաղկոցածորը» 1861 ին Փարիզ, Մ. Պէլլիթալեանի, Ս. Հէքմեանի և Կ. Գաբաշեանի «Յոյսը» Պոլիս 1861 ին և 1880 ին մեր «Բեմը» ուսիկս բնաւ ձայն չի լսուեցալ :

Ամբողջ Հայերէն թերթից թուահամարը ընկելով կը տեսնենք որ մ.այն Պոլսոյ մէջ հրատարակուած է 77,

Ինչ բոլոր Տաճկապատի մէջ	102
Ռուսաստան	27
Արեւմտեան Ներսիսայ	9
Հնդկաստան	5
Զանազան տեղեր	7

ընդ ամենը 151

Մ. Ն. ՆՈՒԿԵՍՆ

ՄԱՍԼԷՆԻ ՄԵՂՔԸ

Առաջին անգամ ըլլալով, գեղտեմբեր 1-ի իրիկունը տեսայ Բոպէր Ուօլը : Ժամը զրեթէ եօթն էր : Հօրեղբորս աղջիկը՝ Լուիզ՝ և ես, կծկաւած պատուհանին վարագոյրներուն ներքեւ՝ կը նայէ նք ու կը նայէինք ձւանն որ անդադար կուգար եւ կը նստէր : Ես քսան երիւ տարեկան էի, և Լուիզ տասն եօթը : Կարծես գեւ աչերուս առջեւն է այդ իրիկունը : Լուիզ հագած էր նրբերանդ վարզի գոյն զգեստ մը . իւր փափուկ ուսերն եւ խարտեալ սիրուն գլուխն այդ զգեստին մէջ կը նմանէին շուշանի մը՝ ի փունջ վարզերու : Լուիզի գէմքը շատ գրաւիչ էր, և զայս կ'ըսէի իրեն : Ինքն ալ խնդալով կը վազէր կերթար հայելիի մը մէջ նայելու, յետոյ կուգար եւ երեսն ապաիւրներուն գնելով կ'ըսէր . «Չպիտի դայ» . կ'ըսէր ու կը հառաչէր :

Լուիզի ձանձրոյթը փարատելու համար կը խօսէի նշանածին վրայ . կ'ըսէի թէ ինչպէ՛ս երջանիկ պիտի ըլլան ամուսնանալէ վերջը, ինչպէ՛ս ուրախ զուարթ կեանք պիտի վարէ իւր ամուսնոյն հետ : Լուիզ զրեթէ ինձ մօտիկ չէր ըներ :

— Մտածէ անգամ մը, Մատէն, կ'ըսէր, Բոպէրի հետ զրեթէ ամուսնացած կը սեպուինք և գեւ իրարու երես անգամ տեսած չենք . եթէ ինձ հաճոյ չլինի :

Յանկարծ սկսաւ դողալ . — Ա՛հ, ինքն է, ըսաւ :

Կառք մը կանգ առաւ բակն և չկրցինք տեսնել մէջէն ելնողը : Լուիզի երեսներն, որք ընդհանրապէս գունատ էին, կարմրեցան :

— Ոտքերս առաջ չեն երթար, ըսաւ . արդեօք ի՛նչպիսի գէմք պիտի տեսնեմ :

— Ի՛նչ կը վախճաս, ըսի, մէթէ ազատ չե՞ս մերժել զինքն եթէ քեզ անախորժելի երեւնայ :

Բայց եւ այնպէս ես ալ Լուիզի պէս կը դողայի : Լուիզի եւ Բոպէր Ուօլի ամուսնութիւնն երկար տեսնէ ի վեր որոշուած էր, սակայն երկու խօսեցեալները տակաւին տեսած չէին զիրար :

Բոպէրի և Լուիզի հայրերը պզտիկուց ի վեր իրարու բարեկամ եղած էին և միասին գործի ձեռնարկած . սակայն ձախորդութիւններ վրայ գալով՝ իրարմէ բաժնուած էին :

Պ. Ուօլ Նիւ-Եօրք դնացեր էր իւր չորս տարեկան տղուն հետ . իմ հօրեղբայրս Ֆրանսա մնացած էր : Անտի շատ անգամ այնպիսի ծառայութիւններ կը մատուցանէր իւր Ամերիկայի բարեկամին, որք երբեք չեն մոռցուիր աշնուական հոգիէ մը : Երբ Լուիզ ծնաւ, մայրը տղաբերքէ մեռաւ : Պ. Ուօլ ալ քանի մը տարիներէ ի վեր այրի մնացեր էր : Լուիզի ծնունդը երկու հեռուոր բարեկամաց միջեւ հաստատեց միութեան նոր կապ մը, զոր վիշտն աւելի ամրապնդեց : Լուիզի եւ Բոպէրի հայրերն որոշեցին իրենց զաւակաց բաղդն իրարու կցել, որով երկու ընտանիքներն ալ՝ հաւասարապէս դժբաղդութիւններ կրած՝ ի մի ձուլուէին : Այս էր իրենց տեսչը : Հետեւաբար Լուիզ եւ Բոպէր, քանի որ կը մեծնային, իրենց հայրերէն կը սուրէն զիրար սիրել, առանց զիրար տեսած ըլլալու : Պ. Ուօլի գործերը բաւական ատեն խառնաշփոթ մնացին եւ կարող չեղաւ Ֆրանսա վերադառնալ : Իսկ երբ գործերը կարգի մտան մահը վրայ հասաւ : Բոպէր պարտաւորեալ կարգադրել այս կնճառից ժառանգութիւնն ստիպուեցաւ բաւական ամիսներ Նիւ-Եօրք մնալ, եւ երբ ամէն դժուարութիւններն հարթեց, այլ եւս ուրիշ մտածութիւն չունեցաւ բայց եթէ Ֆրանսա գալ, տեսնել իւր նշանածը, տեսնել այն ընտանիքն որ անծանօթ էր իրեն եւ անհամբեր կ'սպասէր իւր գալտեան, եւ կատարել հօրը վերջին իղձը :

Լուիզ այնքան վարժուած էր լսել ամէն օր Բոպէրի վրայ խօսուածներն որ առանց ըզգալու նորա հետ կապուած էր այնպիսի ներքին եւ զօրաւոր կապերով, որ եթէ իրեն ըսէին թէ այդ ամուսնութիւնը կարելի չպիտի ըլլայ, շատ տարաբաղդիկ պիտի համարէր զինքն : Եւ սակայն, երբ հասաւ այն վայրկեանն յորում պիտի տեսնէր Բոպէրը, յանկարծական մոտամոլութիւն մը պատեց սլաշարեց զինքն : Ի՛նչ պիտի տեսնէր արդեօք այդ երկտասարդը կը համապատասխանէր իւր երեւակայած մտադրարկն եւ զոր ինքն երկար տեսն սիրած էր այնքան սրտով, այժման հաւատքով : Եւ եթէ այն երկտասարդը չիւնէր ինչ որ ինքը կ'երեւակայէր : Իրաւ է որ տակաւին ազատ էր, սակայն կարող էր օգուտ քաղել այդ ազատութենէն . իւր ձեռքն էր միթէ ոչնչացը-

նեւ այնքան երազներ, այնքան յոյսեր՝ յորոց հիւսեալ էր իւր կեանքը: Մութ կերպով ինքն ալ կը հասկնար, ես ալ կը հասկնայի թէ իւր ճակատագիրն արդէն վճռուած էր եւ զայն փոփոխելն այլ եւս իւր ձեռքը չէր:

Ես Նուիզը սրտանց կը սիրէի: Որք եւ երեսի վրայ մնացած ըլլալով՝ հօրեղբայրս զիս որդեգրած էր, եւ տասը տարէ աւելի է որ Նուիզի հետ մէկտեղ կ'ապրէինք քոջ պէս: Այդ իրիկունն ինչ որ Նուիզի մտքէն կ'անցներ՝ կը հասկնայի, եւ իմ սիրտս ալ կը բարախէր նոյն յուզմամբ որով իւր սիրտը: Առանց խօսակերպ իրարու երես կը նայէինք:

— Երթա՛նք, ըսաւ վերջապէս. բան մը որ պիտի ընենք, լաւ է որ շուտ ընենք լըմընցենք:

Եւ ձեռքէն բռնելով կամաց կամաց իջանք: Սակայն երբ հասանք փոքր սրահին առջեւ ուր ժողովուած էին քանի մը բարեկամք եւ ազգականք, Նուիզի ոտքերն սկսան դողալ: Բայց ես դրան վարագոյրը վեր առի եւ զինքն առաջ քշեցի:

Բոպէր Ուօլ մեր առաջն էր, չմկնէին մօտ կայնած եւ քիչ մը դէպ ի հօրեղբայրս ծնած: Մէկէն ի մէկ ինձ գեղեցիկ չերեւցաւ. սակայն այդ դէմքն՝ որ շատ կանոնաւոր չէր եւ զոր կը շրջապատէին սեւ մազեր՝ ցոյց կուտար հաստատ եւ զօրաւոր կամք մը: Հօրեղբայրս ներկայացուց զայն իւր աղջկան, եւ երեքն սկսան խօսակցիլ: Այդ իրիկունն մեծ մասը Բոպէր եւ ոչ անգամ մը երեսն նայեցաւ, ուստի ուղածիս պէս զինքը կը դիտէի: Միջահասակ էր, բայց ջղոտ եւ բարեձեւ. կերպարանքը քիչ մը սեղ. ցուրտ կը թուէին աչքերն, սակայն յանկարծ խանդաղատանք եւ գուրգուրանք զայն կը լեցնէին: Իւր խնդուածքն այնպիսի անուշութիւն մը ունէր որ զմայլում կ'ազդէր: Հօրեղբայրս հարցումներ ըրաւ Մացեալ-Նահանգաց մէջ անցուցած կեանքին զրայ, եւ Բոպէրի պատասխանները կը կրէին խղճահար անկեղծութեան շեշտերն, որք վստահութիւն կը ներշնչէ: Իւր գլխէն անցած կարգ մը արտաքոյ կարգի արկածներ պատմեց, որոցմէ կը անսնուէր թէ կեանքի շատ կարեւորութիւն չէր ընծայեր եւ մրցելու իսկ արհամարհանք մ'ունէր:

Երբ Բոպէր կուգար այսպէս յանկարծ կ'յնար մեր բարեկան սրահին մէջ, սովորական մէկը չէր երեւէր բնաւ. ընդհակառակն: Իւր պատմութիւններէ եւ գլխահներէն կը տեսնէինք թէ որչափ որ այդ դէմքը հանգարտաբարոյ կ'երեւէր, բայց եւ այնպէս շատ տաք կրքեր պահուած էին ի նմա: Առանց ուղեւոր Նուիզին երեսը կը նայէի եւ կ'ըմբռնէի թէ այդ փափուկ աղջկը կարող չլիար ըլլար այդ երիտասարդին հետ միասին ընթանալ:

Բոպէր նստած էր Նուիզի քով, եւ ես առանց ուղեւոր կը ժպտէի տեսնելով որ հօրեղբորս աղջիկն այնքան շուտ կը մոռնար զիս: Եւ արդարեւ ի՛նչ պէտք ունէր ինձ: Առաջին անգամ ըլլալով՝ այդ վայրկեանին խորին կերպով զգացի թէ որքան միայնակ եմ աշխարհի մէջ, որքան անօգուտ ազգային համար: Մինչ ցայն վայր սիրտս չէր գիտցած ուրիշ զգացում, բայց եթէ երախտադիտութիւն հօրեղբորս համար, եւ դժբախտ Նուիզի: Միտքս չէր անցած թէ սրտիս մէջ կրնար ուրիշ զգացում մ'ալ ծնունդ առնուլ. սակայն ի փես այդ նորածին երջանկութեան՝ տարօրինակ անհանգստութիւն մը պատեց զիս: Հօրեղբորս թիկնաթուղին կըրթնած՝ վերամբարձ մտքը կը դիտէի լուռ ու մունջ. եւ կը լսէի խաղի թղթերու մի առ մի անկումը՝ զորս առանց ձայնի՝ կը ժողովէին խաղացողներն, կը լսէի Բոպէրի եւ Նուիզի ձայներուն միմեկնեցումն որք կը խառնուէին իրարմէ: Ի՛նչ կ'ըսէին արդեօք:

Բաւական երկար առեն մը այսպէս սահեցաւ: Յետոյ հօրեղբայրս խնդրեց որ բան մը երգեմ. փութացի ոտք ելնել. ուրախ էի որ կրնայի ապստիլ անբացատրելի ճանձարոյթէս: Դիպուածով տեսար մը բանալով, սկսայ երգել Ալլէսթի մէկ կտորն որ Երբ Ալլէսթի հանճարին շունչն յիս շնչեց, չեմ գիտեր սրտիս հզօր յուզում վրդովեց զիս: Ի՛նչ կրքեր, որք նիրհած էին, յանկարծ արթնցան հոգեոյս մէջ՝ զոր նախապէացումները կ'ալէկածէին: Ալլէսթի անուհի հեծկըլանքները թարգմանելու համար այնպիսի շեշտեր ունէի որք մինչ ցայն օր անծանօթ էին ինձ: Պիտի արտասուէի, երբ պատահմամբ զլուսն վեր առնելով՝ նայեցայ հայելիին որ դէմս մթութեան մէջ կէս մը անկերեւութացած էր: Բոպէրի աչքերն յիս

յառած էին, զարմացման եւ սքանչացման խորին բացատրութեամբ: Տեսայ այն նայւածքն եւ զգացի հպարտութեան սարսուռ մը: Շատ տարիներ անցան այդ օրէն ի վեր, շատ անդադրման չի պատահարներ պատահեցան, դառն սրտաբեկութիւնք պատառ պատառ յօշոտեցին հողիս, բայց չեմ կարող մոռնալ այն առաջին նայւածքը զոր գործունի տեսայ մութ հայելիին մէջ, եւ որ մորէս չէր անցներ թէ ո՞րպիսի մահաբեր զօրութեամբ օժտուած էր: ԲՅԱ ԱԼՊԱՆ

(Շարունակէ)

ՊՈՍԴՈՆԻ ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԴՐԱՏՈՒՆԸ

Պոսդոն, 6 օգոստոս 1884

Քաղաքակրթեալ աշխարհի մէջ չկան, ըստ իս, հաստատութիւններ որոցմէ աւելի մեծ օգուտ քաղէ ընդհանուր ժողովուրդը՝ քան որչափ կը քաղէ հասարակաց դպրոցներէ եւ հասարակաց գրատուններէ: Արդարեւ հասարակաց դպրոցներ եւ գրատուններ չեն միակ օրհնութիւնք՝ զոր ունին Եւրոպայի եւ Ամերիկայի քաղաքները, վերջնայն զիւղերն իսկ: Բայց, կարծեմ, չափազանցութիւն չըլլար ըսել թէ յետ բարեօրէնութեան եւ գործելու ազատութեան, ոչինչ աւելի նպաստած է ժողովրդոց յառաջդիմութեան եւ բարդաւածման քան հասարակաց դպրոցներն եւ հասարակաց գրատուններն, ճշմարիտ վստահաններ՝ որոցմէ ծագած լոյսն է որ այնչափ սպայծառ կը փայլեցունէ քաղաքակրթ աշխարհի լաւագոյն կողմերը: Բարձրագոյն դպրոցներու եւ համալսարաններու կարեւորութիւնն եւ օգտակարութիւնը նուազեցնել չեմ ուզեր: սակայն քաղցատելով հասարակաց դպրոցներուն եւ գրատուններուն, ի՞նչքան բարձրագոյն դպրոցը եւ համալսարանը, ինչպէս եւ անոնց վերաբերեալ գրատունը, ոչ այնչափ զիւրաւանդելի են, եւ ոչ այնչափ ընդհանուր բարեաց աղբիւր:

Խաղիոյ, Գաղիոյ եւ Անդղիոյ մէկ քանի գլխաւոր քաղաքները պտտեցայ, եւ որչափ կը ներկին ժամանակս ու պարագայներս, ջանաղի տեսնել հնութեանց եւ գեղարուեստից թանկարանները, կրթական եւ բարե-

արական հաստատութիւններն, հոյակապ շէնքերն եւ հասարակաց գրատուններն: Ամէնքն ալ պատուական, ամէնքն ալ սքանչելի, ամէնքն ալ սրտի եւ մտաց ազնուութեան, բարձրութեան եւ հանճարոյ անմահ կոթողներ էին, սակայն ուշադրութիւնս գրաւեցին առաւել քան զամենայն հասարակաց գրատունները: Մինչ կը տեսնէի գրատութեանց գանձերը, աշխարհի իմաստուն, առաքինի եւ հանճարաւոր անձանց խորհուրդները, գաղափարները եւ տքնութեանց ու հետազոտութեանց արդիւնքները հոյակապ շէնքերու մէջ ամփոփուած, եւ մարդիկ ամեն զիւրութիւն ունէին երթալ հոն իրենց մտաց լոյս, վշտաց սիրտանք, եւ իրենց գիտնական ջանք եւ աշխատութեանց մէջ օգնութիւն եւ զօրութիւն առնելու, միտքս տխուր խորհրդով կը պաշարուէր թէ ո՞րպիսի զիւրութիւններէ եւ օգնութիւններէ դուրկ են Թուրքիոյ ուսումնասիրեց պատանիք եւ օրիորդք, երիտասարդք, արք եւ կանայք: Հարիւրաւոր արք եւ կանայք հասարակաց գրատուններու նստարաններուն վերայ շարուած լռիկ մեծիկ կ'ընթեռնուին, եւ ոմանք յատուկ տետրակներու մէջ կ'արձանագրէին այն խորհուրդները, գաղափարներն եւ տեղեկութիւնները որ թերեւս նոր էին իրենց համար, կամ իրենց մասնաւոր ուշադրութիւնը կը գրաւէին: Գտնալով մեր ուսումնասիր երիտասարդաց նիւթական վիճակը, փափաքելով կը փափաքէի մանաւանդ որ Պոլսոյ մէջ գէթ բացուէր մի հասարակաց գրատուն, ուր կարենային իրենց քաղցը յագեցունել ուսման եւ գիտութեան քաղցեալ երիտասարդներ:

Այս անգամ նպատակս է բաւական ընդարձակ գաղափար մը տալ թէ ինչպիսի հաստատութիւններ են հասարակաց գրատունք, եւ ինչո՞ւ շատ մ'աղէկ բաներէ աւելի օգտակար կը համար մ'զանոնք: Պիտի նկարագրեմ համառօտիւ Պոսդոն քաղաքին հասարակաց գրատունն՝ որ է մին աշխարհի նշանաւորագոյն գրատուններէն: Արժան կը համարիմ նախ յայտարարել թէ Պոսդոնի մէջ թէեւ մեծագոյն բայց միակ գրատունը չէ հասարակաց գրատունը: Բարձրագոյն վարժարաններ, գիտնական եւ կրօնական ընկերութիւններ, քաղաքական խմբակներ (շէնք), քրիստոնեայ երիտասարդաց եւ

արուեստաւորաց ընկերութիւններ, մի ուր բանիւ, չառ մարմիններ ունին բազմաթիւ գրատուններ, որոցմէ օգուտ կը քաղեն այն հաստատութեանց և ընկերութեանց վերաբերեալ անձինք :

Պոսդոն քաղաքին գրատունը, սակայն, է հասարակաց գրատուն : Այս գրատունը հոյակապ չէնք մէ Գրէմնդ փողոցէն իբր քսան քայլ միայն հեռի, Պայլսդոն փողոցին վրայ որ Հասարակաց Պարտիզին հարաւային կողմէն կ'անցնի : Գրատան ճակատը գլորուած է Հասարակաց Գրատուն և դրան երկու կողմերը գրուած են նոյնպէս գրատան անունն, և « սա բառերը » « Բայ ասիւն » : Գրատունը շատ յարգի է ոչ միայն հարըտութեան և ընտիր կարգադրութեանը համար, այլ վասն զի զիւրամատչելի է ամեն կարգէ, ամեն սեռէ և ամեն աստիճանէ մարդոց : Ով որ կ'ուզէ գիրք կամ սրբաբանական թերթ մը ընթերցուել, աղատ է մըտնել գրատան դռնէն ներս : Գրատան յաճախորդներէն բնաւ բան չսահանջուիր, և ամէն կերպ հանգիստ և զիւրութիւն կը տրուի անոնց մեծ սրահներու մէջ նըստելու և խորին ուշադրութեամբ կարդալու որչափ ատեն որ կ'ուզեն :

Անոք որ պոսդոնցի են, կամ Պոսդոն կը բնակին, կրնան լրենց տունն ալ տանիլ ինչ գիրք որ կ'ուզեն : Բայց մարդիկ որպէս զի կարող ըլլան գրատունէն գիրք դուրս հանել, նախ ստացած ըլլալու են քարտէս : Քարտէսը զիւրութեամբ կ'ստացուի : Գրատան վարի յարկը կայ յատուկ պաշտօնատար մը, որ քարտէս տալու գործով կը զբաղի, և նախնական քննութիւններ կը կատարէ : Ով որ կ'ուզէ քարտէս առնուել, պարտի գիմել այս պաշտօնատարին՝ գրով տալով իւր ամբողջ անունն ու մականունը, բնակութեան տեղն և յայտնելով թէ զով կը ճանչէ Պոսդոնի մէջ : Պաշտօնատարը կը ստուգէ իրեն տրուած տեղեկութիւններն, և եթէ գոհացուցիչ գտնէ ամէն բան, չորս օրէն կը յանձնէ պահանջուած քարտէսը : Այնուհետեւ այն անձն, որ քարտէս ունի ի ձեռին, կրնայ իւր քարտէսը ցուցնելով առնուել ինչ գիրք որ կ'ուզէ : Գրքերն ա՛յնպէս կարգադրուած և պաշտօնապէս ա՛յնչափ վարժ են, որ ամէն պահանջուած գիրք կրնան գտնել և պատրաստել հինգ վայրկեանի մէջ :

Սակայն մարդ մը մէկ անգամէն մէն մի յարկէն մէկէն աւելի գիրք չկրնար առնուել դուրս տանելու, և դուրս տարուած գիրքերն, եթէ գիտութեան, պատմութեան կամ արուեստից կը վերաբերին, գրատուն բերուելու են երկու շաբաթէն, իսկ եթէ վաղասանական գիրքեր են, ետ դարձուելու են մէկ շաբաթէն : Իսկ գրատան մէջ կարդալու համար մշանդամէն կրնայ ամէն մարդ մինչև չորս գիրք առնուել, և եթէ ուզէ, բոլոր օրը նստիլ և կարդալ :

Գրատունն երկու յարկ է, և քանի մը սրահներու բաժնուած : Վարի մէկ սրահին մէջ պարբերական թերթեր և հանդէսներ միայն կան, զլսաւորաբար անդ զիւրէն, դասիւրէն և դերմաներէն լեզուներով հրատարակուած նշանաւոր շաբաթաթերթերն, ամսաթերթերն և ուրիշ հանդէսներ : Այն նաև ուր չ եւրոպական լեզուներով հանդէսներ : Այս սրահը գրեթէ միշտ լեցուած կ'ըլլայ այր և կիւն, մանչ և աղջկ ընթերցողաց բազմութեամբ, և բնաւ ձայն չլսուիր : Մերթ ոստիկաններ կուգան ներս, զի մի գուցէ արբեալ ոք ներս մտնէ, և անկարգութիւն գործէ : Դժբաղդաբար երկու անգամ տեսայ մէկ մէկ արբեալ երիտասարդներ, որք թէեւ մեծ աղմուկ չէին հաներ, սակայն իրենց այլանդակ կերպարանքով և շարժումով կը դրուէին ընթերցողներէն ոմանց ուշադրութիւնն : Իւրաքանչիւր անգամն ոտտիկանը սրահէն դուրս հանեց արբեալն առանց աղմուկի : Վարի միւս սրահը գրեթէ լի է, և մինչև այս ինչ թիւ գիրքերը կը գտնուին այս սրահը :

Գրատան պաշտօնեայներն են բարեկիրթ կանայք, օրիորդք և երիտասարդք : Ամերիկայի մէջ աղջիկներն երիտասարդաց շատ մը գործերն յախտակած են ընդ հանրապէս : Գրագիրք, գրաչարք, ճաշարաններու մէջ ծառայողք զլսաւորաբար են աղջկունք : Ուր չ շատ գործեր ալ, որ Թուրքիոյ մէջ արական սեռն յատուկ կը կարծուին, հոս օրիորդք և երիտասարդք անխափր կը կատարեն :

Հասարակաց գրատան ամենէն հոյակապ մասն է երկրորդ յարկն, որ է ընդարձակ և գեղեցիկ սրահ մը սեղաններով և թաւշեայ թիկնաթոռներով լի : Այս սրահը կը կոչուի Պէյդս Հոլ, անուամբ Մր. Պէյդս

անուն անձն որ 50,000 թաէր, կամ 10,000 անգղիական ոսկի տուած է գրատան՝ սա պայմանաւ որ այս գրամագլխին չահով տարուէ տարի գիրք գնուի գրատան համար:

Ուրիշ հարուստ և առատաձեռն անձինք ալ մեծ գումարներ տուած են այս գրատան, և անոնց առատաձեռն պագեւներուն շնորհիւ քիչ ատենի մէջ այն աստիճան ճոխացած է գրատունն, որ կ'ըսուի թէ այժմ ունի իբր 600,000 հատոր գիրք: Եթէ մէկն ուզէ նոր գիրք մը՝ որ գրատան մէջ չգտնուիր, անմիջապէս կը փութան գնել զայն, միայն թէ գրատան մէջ գրուելու արժանի գիրք մ'ըլլայ: Այս գրատունն ունի այլ եւ այլ ճիւղեր Պոսդոնի հեռաւոր թաղերուն եւ մերձակայ գիւղերուն մէջ, և խորհուրդ կ'ըլլայ աւելի ընդարձակել բուն գրատունը:

Գրատան մէջ գիտութեանց և արուեստից ամէն ճիւղերն, պատմութեան և աշխարհագրութեան, կրօնից և լեզուաց վերաբերեալ անգղիերէն, զաղիերէն, գերմաներէն և իտալերէն, (հարկ չէ ըսել նաեւ յունարէն և լատիներէն) սպաներէն և այլ լեզուօք հարկաւոր գիրքեր կան: Հայոց պատմութեան, Հայաստանի հին և նոր աշխարհագրութեան և Հայոց ներկայ վճակին վերաբերեալ անգղիերէն և զաղիերէն 15-20 հատոր գիրքեր տեսայ: Խորենացոյ զաղիերէն թարգմանութիւնն հանդերձ հայերէն բնագրաւ, Հայր Ալեքանի Հայոց ռամկական երգոց անգղիերէն թարգմանութիւնն և հայերէն ուրիշ մէկ երկու գիրքեր եւս կան:

Եթէ այս գրատան մէկ տասներորդին չափ հարուստ գրատուն մը գտնուէր Պոլս, աղքատ գրագէտք, դասատուք և ուսումնատենչ պատանքք և երիտասարդք որչափ մեծ օգուտ կը քաղէն:

Մատենադարանի ընկերութիւնն մ'ունէինք, որ եռանդով գործել սկսաւ, բայց քանի մը տարուոյ մէջ ինչ խեղճ մատենագարան մը միայն կրցաւ կազմել: Եւրոպայի և Ամերիկայի մէջ գրատան անունն ալ, գործն ալ մեծ է: Այլ մտալթեմ որ մեր Կ. Պոլսոյ Հայք ունենային գէթ այնչափ ճոխ, որչափ էր գրատունն մը զոր տեսայ հոս ոչ աւելի քան հազար տնուոր գիւղաքաղաքի մը մէջ:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Տ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

11-17 ՕԳՈՍՏՈՍ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Յրանքօ - Չինական բանակցութիւնք խզեցան վերջնապէս: 80 միլիոն ֆրանքի պատերազմական տուգանքն ընդունելու համար Չինաստանի տուած պայմանաժամն օգոստ. 9/21ին լրացած լինելով, Բեքինի ֆրանսական գործակաւտարը մեկնեցաւ Նոյն երեկոյին:

Յրանսական նաւատորմը՝ հրամանատարութեամբ Գուրպէ ծովակալին, օգոստոս 11/25ին, կէս օրին սկսաւ ուժակոծել զՖու - Չէու. ուժակոծումը երեկոյեան ժամ 8ին վերջացաւ: Ֆու - Չէուի նաւարանը բոլորովին քանդուեցաւ. 9 չինական թնդանօթակիր նաւ և 12 ճունկայ (չինական յատուկ նաւ մը) ընկղմեցան: Յրանսական մեծ նաւ մը չինական մարտանաւ մը ընկղմեց: Յրանսացիք 6 սպանեալ և 27 վիրաւորեալ ունեցան, իսկ չինացեացիք 3,000 հոգի ըսպաննուած են: Չինական ծովային զինուորը նաւերէն ցամաք ցատկեցին թնդանօթի առաջին հարուածները լսելով: Ֆու - Չէու քաղաքն՝ որ երկրին ներսը նաւարանէն 25 հազարամեթր հեռուն կը գտնուի, հանդարտ է. Նոյնպէս հանդարտութիւն կը տիրէ Ի Լէքին:

Գուրպէ ծովակալն օգոստոս 14/28ին ուժակոծեց Մենկանի անցքին տարոցներն և չինական հրետանիք պարտաւորեցան զաղբեցնել իրենց կրակն:

Երէկի հեռագիրք կը ծանուցանեն թէ ծովակալն օգոստ. 27ին ուժակոծեց Է Գիմբայի անցքին բերդերն, Մ.նի կամ Ֆու - Չէուի գետին բերանը: Բերդերը քանդուել են: Տէյի Նիուզ կը ծանուցանէ թէ 300 ֆրանսացեաց զօրախումբ մը Քէլունկ ելեր և զրուեր է առանց ընդդիմութեան:

— Ռուսիոյ ելմտական նախարար Պ. տը Պուտկէ այս օրերս տնօրինութիւն մ'ըրաւ, որոյ հետեւանքը պիտի լինի՝ ըստ ամենայն հաւանականութեան, ռուսական թղթագրամի անկումն: Աղբքսանդր Բ. կայսեր

իշխանութեան վերջին ամիսներուն մէջ, կառավարութիւնն 1881 յունուար 1 թիւ հրամանագրով մը յանձն առած էր վճարել 400 միլիոն ռուսկի պանքրոտները զորս Պետական Պանքան փոխ տուած էր 1877-78ի պատերազմին առէն : Կառավարական պարտքը պիտի հատուցուէր 50 միլիոն ռուսկի տարեվճարներով, որով 8 տարիէն պիտի ջնջուէր թղթադրամը : Երեք տարեվճարք հատուցուեցան և հրապարակին վրայ մնաց 250 միլիոն թղթադրամ : Պ. տը Պուենկէ այժմ տարբեր եղանակ մը որոշած է թղթադրամի ջնջման : Կառավարութիւնն ամեն տարի Պանքայէն թղթադրամ պիտի գնէ և ջնջէ, և եթէ բացառիկ պարագայներ չ'ծագին, թղթադրամը պիտի վերնայ ո՛չ թէ հինգ, այլ 25 տարիէն, ըստ տեղեկութեան ուստի լրացրաց :

— Պիզմարք իշխանն և Քալնոքի կոմսն, իրենց տեսակցութեան միջոցին ի Վարձին, համաձայնած են անիշխանականաց դէմ ձեռք առնուելիք հաւաքական միջոցներուն վրայ, որք կը յուսացուի թէ Ռուսիոյ և ուրիշ քանի մը տէրութեանց կողմէ ալ պիտի ընդունուին : Այս երկու պետական անձինք տարակրօյ չկայ թէ իրենց քննութեան սահմանին մէջ առին Եւրոպիոյ քաղաքական հորիզոնին վրայ այժմ տեսանելի ծանրակիւղանդ իրեներն, և գլխաւորաբար խորհրդակցեցան Լոնտոնի դեսպանախորհրդոյ անշաջողութեամբ յառաջ եկած վիճակին վրայ :

— Իտալիոյ մէջ քոլերան ճարակած է չատ տեղեր, ինչպէս Միլան, Թուրին, Բարմա, Ճենովա, Մասա, Քիւնէօ, Պերկամօ և ին. և թեթեւապէս կաւեւնայ դէպ ի հիւսիսային կողմերն, մանաւանդ ի Սքէձիա : Օգոստոս 27ին Նաբոլիի մէջ երկու հողի մեռան քոլերայէն. նոյն օրը Իտալիոյ վարակեալ քաղաքաց մէջ մեռնողներուն թիւն էր 50 և յաջորդ օրը 67 :

— Չինական կառավարութիւնն որոշած է քաղաքային վարչութիւն մուծանել յԱրեւելեան Թուրքաստան և չինական գաղութներու հաստատումմբ չինական իշխանութիւնը զօրացնել այն նահանգի մէջ զոր վերջերս Ռուսաց ձեռքէն ետ առաւ : Ռուս թերթ մը կըսէ թէ Արեւելեան Թուրքաստան վարչային երկու դաւաճներու պիտի բռնուին, որոց միոյն կեդրոն պիտի լինի

Քեաղզար և միւսին՝ Ագսու : Քեաղզար պիտի լինի չինական բանակետդ մը : Չինական զրոյց թիւը պիտի աւելնայ, և նոր պիտի գինուի :

— Ըստ վերջին լրոյց, Միօ ծովակալը փոխադրական դժուարութեանց պատճառաւ յետաձգեր է իւր յառաջխաղացութիւնն Հոնկոնգէն վրայ, բայց այս օրերս շատ ջորի եկած լինելով, Ֆրանսացիք ի մօտոյ առաջ պիտի բալեն ի Մատակաքար և յարձակողականի սկսին :

— Վերջերս Քոլէնձի մէջ լրտեսութեան յանցանք ձերբակալեալ երկու Փըրանսացի սպայներն արձակեցան : Յայտնուած պատճառն այս է որ, անոնց վրայ գտնուած դժագրութիւնք և յատակադիժք անվնաս տեսակէ էին : Բայց բուն պատճառն անոնց արձակման՝ սա լինել կը թուի թէ, գործոց արդի վիճակին մէջ Քեռմանիոյ քաղաքական հաշուոց չյարմարիք Ֆրանսայի դիւրագգածութիւնները զրգուել ընդդէմ Քեռմանիոյ՝ պատժելով Ֆրանսական բանակի երկու ներկայացուցիչներ :

— Ռուսական նաւատորմին մեծ մարզահանդէսները պիտի տեսնեն մինչև օգոս. 28 : Ռուստի, Չարն օգոս. ի 31էն առաջ չպիտի կրնայ երթալ Վարչուիա : Կայսեր ուղեւորութեանէն առաջ, նախարարաց խորհուրդ մը տեղի պիտի ունենայ ընդ նախագահութեամբ Ն. Վեհափառութեան, ուր պիտի քննուի համալսարանական օրէնքը, զոր մերժեց Պետական խորհուրդն : — Ելնտական նախորդ նախարար Պ. Ապաղա Պետական խորհրդոյ ելնտական ճիւղին նախագահ անուանեցաւ փոխանակ վախճանեալ Պարանոֆ կոմսին :

— Բարիպու լրացրաց մէջ կը տեսնենք թէ Ֆրանսերէնի ծաւալման աշխատող «Ազգային Միութիւնն» Այնդ ապիւ և Մարալի Ֆրանսական դեր-հիւպատոսէն տեղեկացիր մը ստացած է Մարալի հրդեհին վրայ, յորում դժբախտ հրկիւղեց կրած ծանր վնասներն և ենթարկուած խղճալի վիճակը նկարագրելէն յետոյ, դեր-հիւպատոսը Միութեան հրաւէր կը կարդայ հանդանակութիւն բանալ և դրամական օգնութիւն հասցնել հրկիւղեց, նըկատելով թէ ամերիկեան միլիոնարք, որք անդլո-սաքսոն ցեղը կը ներկայացնեն, այսպիսի պարագայից մէջ կը վտւթան Անդլիայէն և Ամերիկայէն դրամ բերել տալ տե-

դուցւոց մօտ իրենց ազդեցութիւնը զօրացընելու համար: — Թան, հրատարակելով հիւպատոսին խօսքերը, կը յարէ: « Մարաշ քաղաքը կը գտնուի Ասիական Թուրքիոյ այն մասին մէջ որ Փոքր Հայաստան անուամբ ծանօթ է: Հալէպի հիւպատոսը մին 146 քիլոմետր հեռի: Փրանսական Միութեան բնդ հարաւորուողը, (թիւ 2, փոքր Սէն-Սիմոն, Բարիս), շնորհակալութեամբ կ'ընդունի հանգանակութիւնները: »

— Պոէրը չեն դադարի Անգլիացւոց դժուարութիւնն պատճառել: Զուլուստանի այն մասին զոր Անգլիայի Սէդիվայոյի թողած էին և որ Զուլուստա գաւորին մահուամբ կերպով մը անտէր մնաց այս անգամ Պոէրները տիրեցին, յաղթելով Սէդիվայոյի իշխանութիւնը կորզող Ուզիպէթու անուն Զուլուստա գաւորին, զոր Անգլիայի ճանշած էին: Բարեյուսոյ Հրօւանդ անէն օգոստոս 21 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բրեյտերոյ մէջ (մայրաքաղաք Պոէրաց) յայտարարութիւն մը հանուած է որ կ'ըսէ թէ Զուլուստանի մէջ Պոէրական Հանրապետութիւն մը հաստատուած է, թէ Զուլուստան այս Հանրապետութեան իշխանութեան ներքեւ դրուած է, և Ուզիպէթուի հրաւէր կ'ուղղուի հպարտալիլ չորակալով իշխանութեան: Սէդիվայոյի որդի Տէնիպուլու, զոր Պոէր Թագաւոր հրատարակած էին, կը վաւերացնէ Հանրապետութեան հաստատումը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Բարձր Մեծ-Եպարդոսն եւ ներքին գործոց ու դատական նախարարը շարժուս սկիզբն իբր յանձնաժողով դումարելով, խորհրդակցեցան եկեղեցական առանձնաշնորհմանց խնդրոյն վրայ:

— Լոնտոնի Օսմանեան դեսպան Միւզիւրիւս փաշա ի մօտոյ մայրաքաղաքս պիտի գայ Վեհ Ուլլիթոնին հրամանաւ:

— Բ. Դուռը եւ Գարստաղի կառավարութիւնը բանակցութեան մէջ են, առեւտրական դաշնագրի մը եւ թղթատարական պայմանագրի մի կնքման համար:

— Կառավարութիւնն որոշած է որ այ-

սուհետեւ մայրաքաղաքէս դուրս ուղեւորողներն պարտաւոր լինին անցադիր առկու ժամանակ ցուցնել իրենց Օսմանիէ Թէգքէրէն որ ներկայ մարդահամարի առթիւ պիտի տրուի:

— Դատական նախարարութեան առաջարկութեամբ Բարձր Մեծ-Եպարդոսն որոշած եւ ըստ այնմ հրահանգ տուած է որ դաւառաց լրաւադիտական խնդիրներն ոչ թէ Բ. Դրան իրաւագէտ խորհրդականաց յանձնուին, որպէս կը լինէր ցարդ, այլ դատական նախարարութեան:

— Բ. Դուռը կը խորհի Հանքաց եւ Աւստառաց վարչութիւնն առեւտրական նախարարութեան անջատելով, մասնաւոր նախարարութիւն մը կազմել:

— Յունաց պատրիարքական ընտրողական ժողովն անցեալ չաքաթ օր դումարելով, եղեւնական յանցանք ամբաստանեալ քահանայից նկատմամբ հետեւի դատավարական եղանակին համար պարտաստեալ օրնական ծրագրի քննութեամբ դադարեցաւ և նոյնութեամբ քուէարկեց ծրագրի առաջին չորս յօդուածներն: Երկու շաբթի վերստին դումարելով ընդունեց նոյնպէս մնացեալ 5 յօդուածներն: Այս ծրագիրը թուրքերէնի թարգմանուելով Բ. Դրան վաւերացման պիտի մատուցուի: Ընտրողական ժողովը ծրագրի վաւերացումէն յետոյ, վերստին դումարուելով պատրիարքական ընտրութիւն պիտի կատարէ: Այս ընտրութեան համար գաւառաց մեծադոյն մասն քուէներն կնքեալ զրկուած են արդէն Ֆէնէրի պատրիարքարանը:

Ճէրտէի Հավատարմ լուրը կը զրէ թէ ընտրողական ժողովը դատական նախարարին մատուցած է Պատրիարքական ընտրութեան տեղեկադիրն:

— Վանայ նահանգին կրթական տեսուչ կարգեցաւ Բաղէշի նախորդ կրթական տեսուչ Մէհմէտ Շէվքի էֆէնտի:

— Կայս. Միւլքիյէ վարժարանի այս տարւոյ չրջանաւարտ էֆէնտիք իրենց վիայականըն ստանալով, տասնմէկն առեւտրական և երկրագործական նախարարութեան նորակալութարգմանչաց դիւանի անդամ կարգեցան. ասոնց մէջ է մեր ազդայններէն Այնթապցի Յովհաննէս էֆէնտի:

— Առեւտրական և երկրագործական նախարարութիւնը գաւառական իշխանու-

խեանց հաղորդեց դաւառաց մէջ հաստատելի առեւտրական և երկրագործական սեւեկաց կանոնադրի օր նակներն : Ասոնց կըցուած է Եպարզոսական շրջաբերական մը որ կը պատուիրէ անյատկալ ձեռնարկել այդ հաստատութեանց կազմութեան : Ըստ կանոնադրի, նախագահը, ղեր-նախագահը և 12 անդամք՝ ո՛ր և է վարձատրութիւն չը պիտի առնուն : քարտուղարք մէկն, լրբ բացառութիւն, թոշակ պիտի ստանան սեւեկաց հասոյթէն :

— Պոլսոյ կեդրոնական բանտին մէջ լուսանկարի գործարան մը հաստատուեցաւ : Բրեւ ոճրագործ դատաւարտելոց պատկերներն հանելու համար :

— Կրէտէի Ազգային Ժողովո՛ւ մէկ մի իոն զրուշ յատկացուցեր է վարժարանաց համար :

— Ըստ կարգադրութեան թղթատարական վարչութեան, այսուհետեւ սուրհանդակ մը պիտի երթեւեկէ Սերասարաէն Գարահիսար, նամակներէ զատ՝ ամեն տեսակ աւանդ և օրնակ ընդունելով :

— Կրթական պաշտօնատունն հրահանգ տուած է՝ դաւառաց կրթական տեսչաց որ ի հաշիւ կրթական արոց՝ առնուած արմըտիքն առնուն շտեմարանէն :

— Ադրիանուպոլսոյ մէջ Քիււս մը բացուած է որ ամեն ազգի երեւելի և պատուաւոր, ընտանիքներէ 60 է աւելի բաժանորդներ ունի :

— Հռոդոս յաքսոր գտնուող Մահմուտ փաշա՝ կոյսերական ներսն շնորհաց արժանաւոր մայրաքաղաքս եկած է :

— Այս տարի Րիւշտիյէ վարժարանաց չըջան աւարտող 200 ի չափ աշակերտք իրենց ուսուցչապետին հետ կրթական պաշտօնատունն հրաւիրուելով, վկայական ըստացան ի ներկայութեան կրթական նախարարին և կրթական բարձրատիճան պաշտօնատարաց :

— Քանի մը օրէ հետէ Պոլսոյ մաքսատան մէջ նոր կարգադրութիւն մը բաւական չըփոխութեան տեսլի տուած է : Մայրաքաղաքէս դուրս վաճառք զրկող վաճառականք միշեւ ցարդ մէկ անտուկի մը մէջ խառն կը զետեղէին բնիկ և օտար վաճառքն : Արդ, ըստ նոր կարգադրութեան, կը պարտաւորին զատ զատ անտուկի մէջ զնել բնիկն և օտարն : Բազում վաճառականք փութացած են խնդրադիր մատուցանել մաքսատան տեսչութեան, ըստ առաջնոյն վարուելու համար :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

—o—

Ամեն Ռ. Պատրիարք Հայրն իւր հիւանդութեան վերջին ծանուցեալ վիճակին վերայ, փափաք յայտնած է Պատրիարքական խորհրդական մը կարգելի գիտութիւն ազգային գործոց և խնդրոց :

— Վանայ նահանգին մէջ կառավարութիւնն սկսեր է հաւաքել կրթական տուրքն, որ Բէ՛Քէ՛Քէ՛ի, աշաբի եւ այլ այսպիսի արոց վրայ 100-ն 6 յաւելում մը պէտք լինի. այսինքն՝ 160 զը՝ Բէ՛Քէ՛Քէ՛ տուողը այսուհետեւ 106 պիտի տայ, նոյնպէս աշաբի եւ այլոց համար : Այստեղական կառավարութեան որոշմամբ այս արոց ընդհանուր գումարէն բոլոր հպատակ ազգաց եւ հետեւաբար մեր Պատրիարքարանին եւս բաժին պիտի հանուի :

— Մանչէսթըրի պատուարժան ազգայնոց նախորդ հովիւ Գեր. Տ. Եսայի Ծ. վարդապետ Աստուածատուրեանց այժմ Լոնտոն կը գտնուի եւ կ'աշխատի հանդանակութեամբ համեմատելի Հայկական Վարժարան մը, իւր ունեցած՝ 1000 լրայի չափ գումարն ալ յատկացնելով նոյն հաստատութեան :

— Ադրիանուպոլսոյ Առաջնորդ Գեր. Տ. Արշակակէս Եպիսկոպոս հրաժարեր է, իւր ամաթոշակին անբաւականութեան պատճառաւ :

— Վեհ. Սուրբանին բժշկապետ Մալբոյէնի փաշա կ'ըսէր որ իւր տ'կնոջ հետ Պէ՛Քէ՛Քէ՛ի Ս. Աստուածածնայ եկեղեցին երթալով, ներկայ գտնուեցաւ Գեր. Թորէն Նարպէյ Սրբազանի հանդիսաւոր Պատարագին եւ ապա եկեղեցւոյ դահլիճն ելնելով, արժանապաշկ մեծարանօք ընդունուեցան : Երկուշաբթի օրն եւս Ս զանիական դեսպան Քօէլլօ կոմսն այցելութիւն տուաւ Նարպէյ Սրբազանին ի Պէ՛Քէ՛Քէ՛ քիթալ :

— Բողոքական ազգայնք տակաւին լըքեալ կը մնան առանց ազգապետի : Բ. Դըռնէն վաւերացեալ ազգայն կնիքն ալ որ հրաժարեալ ազգապետն գործակատար Ստեփան էֆէնտ ի բով կը գտնուէր, Իւսկիւտարի վերջին հրդեհն ժամանակ այրեր է գործակատարն բնակած տան եւ կահկարասեաց հետ : Հետեւաբար յոյս կայ թէ

Կայսերական կառավարութիւնն այլ եւս կը կարգադրէ նոր աղբարկեալ մը ընտրութեան խնդրին :

— Ուսումնական խորհրդոյ անդամք չորեքշաբթի օրը Քաղաքական ժողովոյ մատուցին Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի համար յայտագիր մը , որով ցոյց տըւած են վարժարանն բացման ու մատակարարութեան միջոցներն . եւ որովհետեւ մի եւ նոյն խնդրոյն վրայ ուրիշ տեղեկագիր մ'ալ մատուցեալ էր այն յանձնաժողովոյ կողմէ որ մէկ ու կէս տարի առաջ սկսուած հանգանակութիւնն Ամեն . Ս . Պատրիարք Հօր նախադաշնութեամբ չարունակելու պաշտօն ունէր , եւ այդ տեղեկագիրն Ուսումնական խորհրդոյ առաջարկութենէն տարբեր առաջարկութիւն մը կ'ընէ , ժողովն Ուսումնական խորհրդոյ հետ բանակցելէ յետոյ , Յանձնաժողովոյ տեղեկագրին յանձնեց անոր , որ ուսումնասուրէ եւ իւր կարծիքը մինչեւ 15 օր ներկայացնէ Քաղաքական ժողովին : Բաց ի կարգ մը ընթացիկ գործերէ , նոյն նստին մէջ Քաղաքական ժողովն , զբաղեցաւ կրթական սրտց խնդրովն , եւ ինչ ինչ անօրինութիւններ ըրաւ մարդասանարի օրինաւոր կատարման համար :

— Ուսումնական խորհուրդն իւր վերջի նստին մէջ զբաղելով Կեդրոնական վարժարանի հաստատութեան համար Քաղաքական ժողովէն առ ինքն յղեալ տեղեկագրոյն քննութեամբ , որոշեց իր վերջերս առ Քաղ. ժողովն մատուցած ծրագիրը բարեփոխել եւ Կեդրոնական վարժարանի հաստատման համար Ազգային ժողովոյ ներկայանալի օրինական ծրագիր մը պատրաստել :

— Ազգային ժողովը գումարեցաւ երէկ ընդ առեւտրականութեամբ Տիգրան էֆէնտի Եւստո Փետնի եւ յետ մի քանի առեւտրական գործողութեանց , նախորդ նստի մէջ քուէարկեալ բանաձեւին համաձայն , յառաջիկայ Սահմանադրական տարւոյ պատրաստութեան եւ Կեդրոնական Մտուկի հասցիւթից բարգաւաճման միջոցները խորհելու պաշտօնով յանձնախումբ մ'ընտրեց , հետեւեալ կերպով .

Թորոսեան	Յովհաննէս էֆէնտի
Ճանրմեան	Միլորից »
Նուրեան	Յովհաննէս »
Նորատուռեան	Փարբիէլ »
Չերազ	Մինաս »
Սրբաձեան	Կարապետ »
Փափազեան	Ստեփան »

Ապա առաջնորդական ընտրութեանց խնդրոյն անցնելով , ժողովը ընեց Ազգ. վարչութեան յռանիս 3 ամսով իւ պաշտօնագիրն որ առաջնորդական վիճակները թափուր եւ անխնամ չ'իժուլու համար , կառաջարկէր ա-

ռաջնորդական ընտրութիւնն առժամեայ կերպով Կեդրոնական վարչութեան յանձնել . կարգացուեցաւ նաեւ նախաձեռնութեան դիւանի տեղեկագիրն որ կեդրականէր մերժել ներկայացեալ օրինական ծրագիրն :

Այս պաշտօնագրոց ընթերցումէն յետոյ , վիճաքանութիւն բացուելով , Վարչարանն , Փափազեան , Սուրէնեան էֆէնտիք վարչութեան առաջարկութեան դէմ խօսեցան : Փափազեան էֆէնտի առաջարկեց որ վարչութիւնը հրահանգ տայ դաւառաց որոշեալ պայմանաժամի մը մէջ ընտրել իրենց առաջնորդներն եւ եթէ չ'իւրեք կատարել , յայնժամ միայն առաջնորդն ընտրուի Կեդր. վարչութենէն : Գեր. Իշմիրեան Արքազան եկեղեցական եւ սահմանադրական իրաւունց վրայ յենլով , յայտարարեց թէ ինք եւս համաձայն չէ վարչութեան առաջարկին եւ ընդլայնեց Փափազեան էֆէնտի առաջարկն՝ զոր ինք ներկայած էր նախ Սահմ. ժողովոյ մէջ : Ապա կրօնական ժողովոյ Առեւտրական Գեր. Սուրէն Նարյէյ Արքազան խօսք առնելով , յայտնեց թէ՛ ըստ որում ժամանակն եւ հանդամանքները փոխուած են այն թուականէն ի վեր երբ վարչութիւնն այս առաջարկ բերած է ազգային ժողովոյ եւ առաջնորդական խնդիրն արդի դատական նախարարին փոխից չնորհիւ իւր լուծումն ստանալու մօտ է , վարչութիւնն եւս կը յարի ներկայացեալ առաջարկութեան :

Ժողովոյ փակման ժամն հասած լինելով , որոշուեցաւ յաջորդ նստին թողուլ վիճաքանութեան չարունակութիւնը :

Աւասիկ ներկայացեալ բանաձեւին պատճէնը :


« Վարչութիւնը պարտական է հրահանգ տալ առաջնորդական վիճակաց՝ որք չունին առաջնորդ կամ որոց առաջնորդներն անհնար պիտի ըլլայ զրկել արտաքոյ կարգի պատճառներով , ընտրել իրենց առաջնորդները որոշեալ պայմանաժամի մի մէջ , փակեալ ցանկի մը վրայ , որ 3էն մինչեւ 5 եկեղեցական պիտի պարունակէ , ամէնքն ալ յարմար եւ արժանաւոր առաջնորդական պաշտաման :

« Եթէ վիճակ մը դիտողութիւն ունենայ ցանկին վրայ աւելնալիք անձի մը վրայ , Վարչութիւնը կը յաւելու զանի , եթէ բաւարար արդէք մը չտեսներ :

« Եթէ որոշեալ պայմանաժամուն մէջ վիճակ մը չ'իւրեք կատարել իւր ընտրութիւնը , Վարչութիւնն կ'ընտրէ առաջնորդ այն ցանկին մէջէն , որ հաջորդեալ է արդէն նոյն վիճակին , եւ փոխառութեամբ կը վճարէ անոր ճանապարհի ծախքը եւ 3եր. մասն յանձնելով կը զրկէ ի նոյն վիճակի » :

ՀՐԴԵՀԻ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՄ ՄԻԶՈՑՆԵՐ

Որքան մարդիկ, հրդեհի ժամանակ տան մը վերի յարկէն չկարենալով փախչիլ, արած են: Փաղաքաց խիտ ու նեղ սանդուղներով բազմաթիւ տանց մէջ երբ հրդեհ պատահի, բնակչոց առաջին հոգն է կեանքներին ազատել, եւ վա՛յ անոնց որ վար իջնելու միակ սանդուղը բոցերով շրջապատեալ կը տեսնեն. պէտք է սոքա անյոյս ըստաւեն սոսկա՛յի մահուան: Կ. Պոլսոյ մէջ եւս, հրդեհներու առատութեամբ ստէպ պատահած է նիւթեղէն կորուստներու հետ անձերու կորուստն եւս տեսնել եւ ահա այս կարեւոր վտանգին առաջին առնելու համար մեր ընթերցողաց կը ներկայացնենք հետեւեալ հանձարեղ միջոցը զոր ամերիկեան գիտապատ թերթի մը մէջ կը տեսնենք:



Թերցողաց կը ներկայացնենք հետեւեալ հանձարեղ միջոցը զոր ամերիկեան գիտապատ թերթի մը մէջ կը տեսնենք:

Պատկերին մէջ տեսնուածին նման չէնք մը կառուցուած տունն՝ պէտք է տան երեսին մէկ անկիւնը ուղղահայեաց սանդուղ մը շինել, սանդուղ որ ծածկուած կը մնայ դռներով, որոնք կղզուած կը մնան սովորաբար գոյերու դործունէութեան յիշուածիւն չընծայելու համար ինչպէս կը տեսնուի պատկերին ձախտիւթի: Տեսէք ամեն մէկ յարկի պատուհաններու շարքին առջեւ պատշտամբներ կան, եւ այն պահուն որ հրդեհը սկսած է պատուհանէն դուրս ցատիլ, պատշտամբն անիւնն երթալով սանդուղին փեղին բանալ ու վար իջնել մի քանի վայրկեանի դուրս է:

Այս միջոցը գործադրուած է շատ նորաձէն տուններու վրայ, եւ փորձը հարկաւ ցոյց կուտայ թէ ի՞նչ աստուծան օգուտներ կրնայ ընծայել:

ԵՐԳ ՍՈՆԱԿԻ

Գարունն եկեալ՝ անուշ հովերն հնչեցին,
Սիրով վառեալ՝ երէկ սոխա՛ն 'ի յայգին
Ի գէժ վարդին եղանակէր լալագին:

Բացվիր, իմ նազելի, տեսող կարօտ իմ՝ կարօտ,
Ջարթիր իմ անմահ, գեղոյդ կարօտ իմ՝ կարօտ:

Գիշերն 'ի բուն այրած սիրտս մաշեցաւ,
Եանց գիշերն, առաւտան երեցաւ,
Արշալոյսն Արեւելից փայլեցաւ,

Բացվիր իմ նազելի և ըն:

Գերի լինիմ՝ քո ամէն մէկ տերեւուն:

Քենէ 'ի զատ ինձ ո՛չ այլ ինչ երեւուն:

Չ'տար ինձ լոյս առանց քո լոյսն արեւուն:

Բացվիր իմ նազելի և ըն:

Ես՝ քո փշովդ թէ բիւր անգամ հարկանիմ՝

Եւ քո սիրոյդ թէ և 'ի հուր արկանիմ՝

Չայն ամէն ինձ անթիւ բարիք վարկանիմ՝

Բացվիր իմ նազելի և ըն:

(Բաղէշ)

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱՒԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 17 Օգոստոս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Ղոնորայի վրայ (պանդայի)	410 1/8
3 » » » (վճռակնին)	409 5/4
3 » Բարիդի » (պանդայի)	22 95
3 » » » (վճռակնին)	23 2 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՎԹՈՑ

Օսմանեան Բոսնիայի:

Երեկ երեկոյ գոցուեցաւ	» 8 38 1/2
Պորայի գոցուեցաւ վերջը	» 8 39
Այսօր Բերայի մէջ	» —
Առաւօտուն բացուեցաւ	» 9
Բարձրագոյն գին	» 9 1/4
Նուազագոյն	» 9
Կէս օրին	» 9 1/2
Իւնիֆիէ Եգիպտական	67 25
Երեկ իրիկուն գոցուեցաւ	66 30
Բերայի մէջ	» —
Այս առտուն բացուեցաւ	66 35
Կէս օրին	66 35
Փոխառութիւն 1863	» 60
» 1865	» 52
» 1869	» 46
» 1873	» 42
Պոն տիւ Թրէզոր	» Այդ Լր 48 50
Բուսէլիի երկաթուղի	» 44 75
Օպիկտիսի տը Բրիտիլիէ	» 375
Բաժնեթուղթ Լաւրիամի	» 81

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	» Այդ Լր 3 27
Գրէտի Ժէնէրալ (Գ. Կ.)	» Օսմ. Լր 6 30
Պանդ տը Գոնա	» 5 30
Սօս. Շանժէ վալէօր	» Օսմ. Լր 3 26
Թրամուէյ	» » 295

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	» Ղր 400
20 Ֆրանկոց	» 87 26
Անգլիական ոսկի	» 410 9
Բօլ Իմբէրիալ	» 90 7
Քրիմից	» 51 45
Իռլանդի թղթադրամ	» 9
» արծաթ	» 89 30
Ֆիորին	» 9 2
Մէք. արծ. (տարբ.)	» 408 5
Վէցնոց	» 402 37
Հինգնոց	» 402 30
Մէթալիք	» 98 20
Պղինձ	» 800
Թղթադրամ	» 3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՆԱ

Լոնտոն, 28 Օգոստոս ժամ 5 վայր. 45 երեկոյ

Այդ Լր. Բոնայի Է գոցուեցաւ	400 5/8
Օսմ. բացուեցաւ	8 3/16
» » գոցուեցաւ	8 1/8
Օսմ. փոխառութիւն 1865	10 5/8
» » 1869	9 5/8
» » 1871	66 1/2
» » 1872	48
» » 1873	8 1/4
Փոխառութիւն 1877	78 1/2
Պանդ Օթոման	43 5/8
Իռլանդի փոխառ. 73 (գ. 4.)	92
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	59 3/4
» առանձն. (բրիտիլիէ)	82 7/8
Տայրա Սանիէ	58 5/8
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ)	—
Հոնգարական պարտաթուղթ 1877	101 3/4
Փոխանակութիւն Բարիդի վրայ	—

Վիեննա, 28 Օգոստոս ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 75
Օսմանեան երկաթուղի	21 20

Բարիդ, 28 Օգոստոս ժամ 3 վայր. 65 երեկոյ

Ֆրանսական Սանիթ 4 1/2 0/10 բաց	107 35
» » 3 0/10 բաց	78 67 1/2
Օսմանեան Բոնայի Է բանուեցաւ	8 20
» » գոցու. (գ. 4.)	8 22 1/2
Օսմանեան փոխառութիւն 1863	—
» » 1865	51
» » 1869	46
» » 1873	41
Օսմանեան երկաթուղի	44 50
» Իէֆիի բաժնեթուղթ	518 75
Պանդ Օթոման	587 50
Գրէտի Լիոնէ	553 75
» Ֆոնսիէ	1287 50
Բաժնետոմս Լիոնի (գուր. կար.)	1235
Սուէզի ջրանցք	1942 50
Իռլանդի 5 0/10 1877ի	97 1/4
Իտալական Սանիթ (բարձրացած)	95 90
Արեւելեան իռլ. (Իռլ. Օրիան.)	—
Եգիպտական միացեալ գոց	301 25
Սպանիական (արտաքին)	60 1/8
Բրիտիլիէ Թիւրք	373 75
5 0/10 Հելլենական	—
2 1/2 Լոնտոնի վրայ	25 47

ԾԱՆՈԹ. — 3729 և 3730 «Մասիս»

Հարաւոր երկրորդ էջերուն թիւերն
պէտք է լինին 1 է 48 որով ներկայ
թիւը 49-ը երեսնէ կ'սկսի:

AVIS.

La Direction de l'Exploitation des Chemins de Fer Orientaux a l'honneur de porter à la connaissance du public que le tarif spécial N° 12 A applicable jusqu'à présent aux transports des céréales à effectuer du 1^{er} décembre au 31 Mars de chaque année, des stations comprises entre Andrinople et Sarembey-Bellova inclusivement en destination de Dédéaghat est supprimé et remplacé par le tarif spécial N° 12 B, dont les taxes plus réduites seront applicables dorénavant aux transports sus-mentionnés pendant toute l'année.

Le Directeur de l'Exploitation,
R. HALIN.
Constantinople, le 14 août 1884.

RÉGIE CO-INTÉRESSÉE DES TABACS

DE L'EMPIRE OTTOMAN.

Constantinople, le 14 Août 1884.

AVIS.

Il est arrivé à la connaissance de l'Administration de la Régie que des négociants en tabac se dispensent de l'accomplissement de certaines formalités prescrites par les règlements en vigueur en effectuant leurs envois de tabacs en feuilles en pays étranger et notamment en Angleterre. En conséquence le public est avisé que les exportateurs de tabac devront dorénavant se conformer strictement aux dispositions de la loi, d'après lesquelles il est nécessaire de se munir de certificats définitifs. « Sont seuls définitifs les certificats qui constatent, soit l'acquiescement des droits de consommation, soit la remise de la marchandise aux fabriques

« ou aux débitats de tabac dans le pays, « soit enfin la reexpédition des tabacs du « premier lieu d'arrivée à un autre point « des pays étrangers par terre; comme « tels ils serviront à la levée des cautions « fournies par le négociant au moment « de l'exportation du tabac qui fait leur « objet. » (Règlement sur les Tabacs, Art. 31).

Constantinople, le 21/31 juillet 1884.

LA DIRECTION GÉNÉRALE.

ՄԻՍԻՈՏԻ ՇԱՆԱՑԱԿԱՆ ՐԷԺԻ ԹՈՒՐԿԻՅՈՅ

ԱՂԴ

Րէժիի վարչութիւնն իմացած լինելով որ ձխախտի վաճառականները գործարական կանոնադրութեանց պատուիրած բանի մը ձեւակերպութիւնները կատարելէ կը խորշին, և ձխախտի տերն կը զրկեն օտար երկիրներ, մանաւանդ յԱնգլիա, կը ծանուցանէ հասարակութեան թէ այդ վաճառականներն այսուհետեւ պարտին ճշդիւ համակերպիլ օրինաց տրամադրութեանց, որոց համեմատ պէտք է վերջնական վկայագրեր ունենան ի ձեռին « վերջնական են այն վկայագրերն, որք կը հաստատեն կա՛մ օպուման արոց վճարումը, կա՛մ ապանաց յանձնութիւն երկրին ձխախտի գործարանաց կա՛մ վաճառողաց, և կա՛մ վերջապէս հասած առաջին վայրէն ուրիշ օտար երկիրներ ցամաքի ճանրով ձխախտի զրկուիլ, և իբր այն՝ այդ վկայագիրք պիտի ծառայեն բաճնալ այն դրամը, զոր վաճառականք իբր ապահովութիւն տուած են ձխախտին արտածութեան պահուն: »

(Կանոնադր. ձեւեր, Էջ 31)

Ընդ. Տնօրէն-Էն

Կ. Պօլիս 19 31 յուլիս 1884

Արտոնատէր Կ. Ս. Իիթիլիճեօն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՆԵԼԻԷ ԼՐԱԳՐՈՅ